ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մոսինյան Դավիթ Ռոմիկի

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Ալեքսանդր Մանասյան
փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Արթուր Մկրտիչյան
փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Ոսկանյան
փիլ. գիտ. դոկտոր, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. նոյեմբերի 1-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. սեպտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար — փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Ե. Կ. Մանուկյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հրատապությունը և արդիականությունը: Քանի որ պատմությունը ճանաչելի չէ փորձիմացությամբ, դրա նկատմամբ անդրադարձերն անհրաժեշտաբար ի հայտ են բերում փիլիսոփայական հայեցակերպեր, որոնց դիտանկյունից առաջացած հարցերը և դրանց հնարավոր պատասխանները կոչված են լինում մտածելու պատմությունը որպես այդպիսին ու հիմնավորելու պատմագիտության ձեռքբերումները: Մտածումներն ու դրանց հիմնավորումները հետևողականորեն ամբողջացնելու կամեցողության արդյունքում հավակնություն է ձևավորվում՝ պատմության առնչությամբ ծառացող տեսական դիտարկումները վերածել գիտակարգի՝ պատմության փիլիսոփայության, որը ենթադրաբար պիտի սահմանի պատմությունը և ուղղորդի կամ վերահսկի պատմագիտության զարգացման ընթացքը: Այսինքն՝ պատմության փիլիսոփայությունը նախապես մտածվում է իբրև մի գիտակարգ, որի առարկան պատմությունն է՝ որպես իրողություն և դրա ճանաչման ոլորտ, և որի նկատմամբ այն իրականացնում է փիլիսոփայական անդրադարձ: Մյուս կողմից՝ պատմությանն առնչվող փիլիսոփայական հարցադրումներն ուղղակիորեն ենթադրում են պատմության կամ պատմագիտության գոյություն, ինչը, սակայն, բնավ նույն կերպ չի պատկերացվում տարբեր պատմափիլիսոփայական հայեցակարգերում: Պատմության լինելությունը, կամա թե ակամա, կախված է այս կամ այն փիլիսոփայական հայեցակերպից: Ուստի կարիք կա ամփոփելու և վերլուծելու պատմության փիլիսոփայական հնարավոր հայեցակերպերը՝ պարզելով պատմության փիլիսոփայության՝ իբրև գիտակարգի հնարավորությունն ընդհանրապես և մեթոդաբանական որոշակիություն մտցնելով դրա շրջանակներում ձևավորված դիրքորոշումներում ու փաստարկներում:

Առաջին հայացքից պատմության փիլիսոփայության հնարավորության հարցի բարձրացումը կարող է ավելորդ թվալ, քանի որ արդեն վաղուց պատմության փիլիսոփայության ոլորտում կատարվում են ուսումնասիրություններ, հրատարակվում են մենագրություններ, դասագրքեր, դասավանդվում են համալսարանական առարկաներ: Սակայն միայն «պատմության փիլիսոփայություն» խորագրով աշխատություններին հղում անելը բավարար չէ պատմության փիլիսոփայության հնարավորության հարցից հրաժարվելու համար, որովհետև դրանց բովանդակությունների համեմատությունը մի շարք մեթոդաբանական խնդիրներ է առաջաց-

նում: Հարցի լուծում չէ նաև «պատմության փիլիսոփայություն» կոչվող գիտակարգի պատմության ներկայացումը, քանի որ նախ՝ «պատմության փիլիսոփայություններն» այնքան տարբեր են, որ նախապես լոկ վերապահումով կարելի է խոսել դրանք միավորող ընդհանուր հասկացության մասին, երկրորդ՝ կանխավ ենթադրելի է, որ պատմության փիլիսոփայությունը կոչված է պատասխանելու պատմության՝ ինչ լինելու հարցին, ուստի ինչպե՞ս է հնարավոր վստահ լինել, որ ներկայացվածը գիտակարգի հենց պատմությունն է, այլ ոչ թե ինչ-որ հատույթի կամ պահի սոսկ կամայական ամրագրումը:

Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցը վերջին հաշվով վերաբերում է այն պայմաններին, որոնք իրական են դարձնում պատմության փիլիսոփայությունը՝ իբրև որոշարկված գիտակարգ: Այդ հարցը տրամաբանորեն նախորդում է պատմության փիլիսոփայության փաստական գոյությանը. «պատմության փիլիսոփայություն» գիտակարգ գոյություն չունի նախքան դրա հնարավորության պարզաբանումը: Հակառակ պարագայում այդ գիտակարգի պատմությունը կնմանվի անիմաստ հուլունքախաղի, որի ոչ միայն վերջը կանխատեսելի չէ, այլև ընթացքը՝ գնահատելի: Անգամ եթե ժամանակին մաթեմատիկոսներից վերցված և փիլիսոփայության մեջ ավանդույթի ուժ ստացած հայտնի բանաձևը փոխադրենք պատմության փիլիսոփայության ոլորտ՝ ասելով, թե պատմության փիլիսոփայությունն այն է, ինչով զբաղվում են պատմության փիլիսոփաները, այստեղ այն չի գործի մի «անիծյալ» հարցի պատճառով՝ իսկ ինչո՞վ է զբաղվում պատմության փիլիսոփան. ուսումնասիրում է պատմությունը, որի լինելության կերպը դեռ ենթակա բացահայտմա՞ն: Ի դեպ, հարցի պատասխանն առավել ևս շահեկան չի լինի, եթե հարցը հասցեագրված լինի պատմաբան մասնագետին: Իսկ հարցից հիմնովին հրաժարվելն ու անկախ դրանից աշխատանք իրականացնելը ավելորդ կծանրաբեռնի պատմության ոլորտը:

Ուրեմն ի՞նչ է անհրաժեշտ պատմության փիլիսոփայության՝ որպես գիտակարգի լինելության համար: Իհարկե, կարելի է ընդունել, որ պատմության փիլիսոփայությունը երկու կարևոր յուրահատկություն ունի՝ *համընդհանրականությունը* և *մտահայեցողականությունը*[1], բայց դրանով առանձնապես չի որոշարկվում ոլորտը, և բացի դրանից, ստացվում է, թե ակնհայտ է պատմության փիլիսոփայության ինչ լինելը, իսկ այդ առանձնահատկությունները դասագրքային ճշմար-

[1] Տե՛ս Գևորգյան Հ., *Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ*: Եր., «Գիտություն», 2005, էջ 267:

տություններ են: Սակայն եթե պատմության փիլիսոփայությունը ավարտուն, որոշակիորեն տրված լիներ, դրան վերաբերող թերևս բոլոր հարցերը հօդս կցնդեին, փոխարենը ինչ-որ մի գիրք մատնացույց կարվեր և կասվեր՝ ահա՛ պատմության փիլիսոփայությունը:

Քանի որ այդօրինակ գիրք չկա և, թերևս, հնարավոր էլ չէ, ուստի պատմության փիլիսոփայության ոլորտում հստակություն մտցնելու ճանապարհը այն նախնական տրվածությունն է, որով մտածելի են դառնում պատմությունն ու պատմության փիլիսոփայությունը: Պատմագրությունը որպես այդպիսին, բնականաբար, ժամանակագրորեն նախորդում է պատմության՝ իբրև ինքնուրույն ու առանձին տիրույթի շուրջ տեսական մտածումներին: Փիլիսոփայական հայեցակերպերի տեսանկյունից է նախևառաջ հարց դրվում պատմության լինելության փաստի և որակական որոշակիության մասին: Ժամանակագրությունը պատմության է վերածվում, երբ տեսական մարտահրավերներ են ձևակերպվում պատմաճանաչողության և պատմագրության հնարավորության առնչությամբ: Դրանց բացակայության պարագայում թե՛ պատմության, թե՛ պատմագիտության, թե՛ պատմության փիլիսոփայության հիմնավոր գոյությունը կասկածի տակ է առնվում: Այս իմաստով խիստ հրատապ ու արդիական է պատմության փիլիսոփայական հայեցակերպերի վերհանումն ու ուսումնասիրումը, որովհետև դրա շնորհիվ է մեթոդաբանական որոշակիություն մտնելու պատմության փիլիսոփայության և, հետևաբար, նաև պատմագիտության ոլորտում: Պատմությանը և պատմաբանությանը վերաբերող սուր հարցեր են առաջանում և շարունակական բանավեճերից հետո ոչ միայն չեն լուծվում, այլև հաճախ փոխադարձ ըմբռնողությամբ դիրքորոշումներ չեն ձևավորվում, քանի որ դրանք չեն դիտարկվում փիլիսոփայական հայեցակերպերից:

Փիլիսոփայական հայեցակերպերի բովով չանցած պատմագրությունը մնում է սոսկ որպես դեպքերի ու իրադարձությունների արձանագրում, ինչը հանգեցնում է անխուսափելի ճգնաժամերի, քանի որ մի կողմից՝ շարադրանքները կրկնում են իրար, բայց մյուս կողմից՝ պատմական համատեքստը մնում է չբացահայտված, իսկ անցյալը՝ ներկայից կտրված: Ամեն անգամ ճգնաժամերի հաղթահարումը ըստ էության նշանակում է պատմության դաշտում նոր հորիզոնների բացահայտում ու վերհանում, որոնք չեն ներկայացել սոսկ իրադարձութենակենտրոն պատմագրությամբ: Մի շարք հարցեր (ա/ Հայաստանի՞, հայ ժողովրդի՞, թե՞ հայոց պատմություն, բ/ ինչպե՞ս է հնարավոր ազգային պատմությունը համաշխարհային պատմության համաշարադրանքում, գ/ պատմությունը կրկնվո՞ւմ է, թե՞ ոչ և այլն) մնում են փակուղում, պատմության դասագրքերը հիմնարար գիտելիքի մաս չեն

կազմում, եթե նկատի չեն առնվում փիլիսոփայական դիտարկումները: Ընդ որում՝ պատմության տարբեր փիլիսոփայությունների գաղափարական հակադրություններ-ը ևս մտածելի ու քննարկելի են, երբ որ հանգեցվում են փիլիսոփայական հայեցակերպերին, այսինքն՝ երբ որ մեթոդաբանական գործիքակազմ է առաջադրվում պատմությանն առնչվող փիլիսոփայական դիտարկումները մեկ ընդհանուր դաշտում մտածելու համար: Ուստի պարզ է, որ պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծությունը կարևոր է ոչ միայն հայոց պատմագիտական ու պատմափիլիսոփայական մտքի զարգացման, այլև ընդհանրապես պատմության փիլիսոփայության և տեսության տիրույթի որոշակիացման համար:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Պատմության փիլիսոփայական հայեցակերպերին վերաբերող խնդիրները ենթադրում են նախ ընդհանրապես պատմության գիտակցում և դրա նշանակալիության բացահայտում: Ժամանակագրական առումով պատմության կարևորության առաջին գիտակցումն ու գրքային, համակարգված արձանագրումը եղել է Հին Հունաստանում: Անկախ այն վիճարկելի հարցից՝ հին հույները պատմականության զգացողություն ունեին, թե ոչ, անկասկած է, որ Հերոդոտոսը «Պատմության» շարադրումով պատմահոր կարգավիճակ է ստանում: Այստեղ կարևոր է նշել, սակայն, որ Հերոդոտոսն ամենևին էլ հավակնոտ նպատակներ չէր հետապնդում. վերջին հաշվով նա բացառապես փորձում էր մոռացությունից փրկել հույն-պարսկական պատերազմի մանրամասնությունները: Եվ Հին Հունաստանի համակողմանի պատմագիտական հետազոտությունն անհեթեթ գաղափար էր հույների համար, քանզի պատմությունը համարվում էր որոշակի իրադարձությունների գրառում, իսկ դա առանձնակի հմտություն չէր պահանջում: Արիստոտելը, *Պոետիկա*-ում համեմատելով պատմությունը և բանաստեղծությունը, գրում է. «Բանաստեղծը և պատմաբանը տարբերվում են միմյանցից ոչ նրանով, որ մեկը չափածո է գրում, մյուսը՝ արձակ: Հերոդոտոսի երկը կարող է դրվել չափածո ձևի մեջ և, այնուամենայնիվ, դա կմնա որպես պատմական գործ՝ լինի չափածո, թե արձակ: Իսկական տարբերությունն այն է, որ մեկը պատմում է իրապես կատարվածը, մյուսը՝ թե ինչ կարող էր կատարվել: Ուստի բանաստեղծությունն ավելի փիլիսոփայական ու խորն է, քան պատմությունը. քանի որ բանաստեղծությունը միտված է արտահայտելու ընդհանուրը, իսկ պատմությունը՝ մասնավորը»[2]: Եվ քանի որ պատմությունը գործ ունի ոչ թե գոյու-

[2] Aristotle, *Poetics*, The Macmillan Company. Third edition revised. 1902, էջ 35: Հայերենը՝ Արիստոտել, *Պոետիկա*, թարգմ.՝ Ա. Կարապետյան, Եր., Հայպետհրատ, 1955, էջ 163-164:

թյան ընդհանուր օրենքների, այլ եզակի, իսկ հաճախ էլ պատահական իրադարձությունների հետ, դա երբեմն հիմք է տալիս փիլիսոփաներին արհամարհել պատմությունը, բացառել հավիտենականին կապվող փիլիսոփայության և վերջավորին ու պատահականին վերաբերող պատմության խորքային առնչակցումը[3]: Պատմության նկատմամբ մերժողական վերաբերմունքը պայմանավորված էր մի կողմից՝ դրանում սկզբունքի, օրենքի, հավիտենականի բացակայությամբ, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ հունական գաղտնաճեսերում առկա էր կենդանի պատմությունը, որի շարադրումը ու դատողականացումը կենդանին վերածում էր սոսկ ստվերի, և դա ինչ-որ առումով նմանվում էր Հերոստրատի տխրահռչակ քայլին: Այս տեսանկյունից հետաքրքրական է դիրքորոշումը, որ Հերոդոտոսի և նրա հետևորդների հիմնական մղումը «մարդկությանը աստվածային-հոգևորից անջատել ու բացառապես երկրայինում տեղավորելն էր»[4], ինչը քաղաքակրթության առաջադիմությամբ ավելի ու ավելի է ուժգնանում:

Պատմությունը կանոնակարգելու ու որոշարկելու միտումները հանգեցրին նրան, որ XVIII դարում սկսվեց լայնորեն շրջանառվել «պատմության փիլիսոփայություն» եզրույթը (առաջին անգամ գործածել է Վոլտերը)՝ նշանակելով պատմության քննական շարադրանքը, ասել է թե՝ հսկիչ հարցադրումներով ուղղորդվող պատմագիտական հետազոտությունը: Սա պատմության՝ գիտակարգայնացման ուղիղ ճանապարհն էր: Սակայն ոլորտի զարգացման գագաթնակետը կարելի է համարել պատմականության սկզբունքի (historism) ձևավորումն ու տարածումը XIX դարում: Այդ դիտանկյունից «պատմություն» ասվածն արդեն բնավ առանձին իրադարձությունների արձանագրումը չէր, այլ կյանքն իր պատմական ընթացքի մեջ հասկանալու հնարավորությունը: Ընդ որում, այդօրինակ մոտեցման հիմքերն արդեն մշակվել էին տարբեր գիտակարգերում՝ իմացաբանությունում, բարոյագիտությունում և այլն, իսկ դրա դրսևորման գագաթնակետը Հեգելի փիլիսոփայությունն էր: Դա՝ զուտ տեսության առումով, իսկ «գործնականում դա դրսևորվեց պատմության՝ որպես առանձին ակադեմիական գիտակարգի առաջացումով»[5]: Եվ ահա այստեղ տեղի է ունենում պատմության «ադամական մեղսագործությունը». ժամանակին անմեղ փաստագրումներ կատարող պատմությունը հավակնում

---

[3] Տե՛ս Шпет Г. Г., *История как проблема логики*, М., «Либроком», 2011, էջ 462:

[4] Штейнер Р., *Всемирная история в свете антропософии*, М., “Новалис”, 2002, էջ 90:

[5] Nadel G. H., “Philosophy of History before Historicism”, *History and Theory*, vol. 3, N 3 (1964), էջ 291:

է ճանաչել ամբողջը և դրա պատճառով վտարվում «դրախտային աստիճանակարգից» ու այսուհետ ստիպված է գտնել իր տեղը այլ գիտակարգերի կողքին: Իսկ արդյոք այդ գործունեությունն իրականացնելու համար կարիք չկա՞ ներդնելու փիլիսոփայական «գործիքներ». չէ որ պատմությունն ինքը ըստ սահմանման չի դիտարկում իր կարգավիճակի հարցը: Պատահական չէ, որ պատմության հենց այս հավակնության ժամանակ էլ երևան են գալիս պատմության արմատապես տարբեր ըմբռնումներ: Ահավասիկ դրանցից մի քանիսը. «Նրանք, ովքեր Պատմությունը համարում են մասնավոր փաստերի պարզ ամբողջություն, սխալվում են: Նրանք գործնականում կիրառում են մասնավորների հավաքածուն այլ մասնավորների նկատմամբ, որոնք համատեղվում են միայն բարոյական սկզբունքով: Ես ավելի շուտ կարծում եմ, որ Պատմությունն ի զորու է ինքնուրույն վեր բարձրանալ մասնավորի դիտարկումից մինչև իրադարձությունների համընդհանուր հայացք, օբյեկտիվորեն գոյություն ունեցողի մասին գիտելիք»[6] (Լ. Ռանկե), «Այն, ինչը ես կառուցում եմ պատմականորեն, երևակայության արդյունք է, ոչ թե քննադատական մտածողության»[7] (Յ. Բուրքհարդտ), «Պատմագիտությունը էմպիրիկ ընկալման, փորձի և հետազոտության արդյունք է»[8] (Յո. Դրոյզեն):

Պատմության ըմբռնման ուղղությամբ գործադրված ջանքերը երբեմն վերաբերել են գիտակարգի հասկացութային ապարատին (դա բնորոշ է հատկապես ռուսական մտքի ավանդույթին՝ Վլ. Սոլովյով, Լև Կարսավին, Ա. Լոսև և այլք)[9], երբեմն՝ հետազոտության մեթոդներին (նորկանտականություն), իսկ երբեմն էլ առարկային և մտածողության առանձնահատկություններին (Ռ. Քոլլինգվուդ):

Առաջին դեպքում մատնանշվել են այն հասկացությունները կամ կատեգորիաները, որոնցով գործառում է պատմության փիլիսոփայությունը: Այդ հասկացությունների շարքը համալրում են *զարգացումը*, *լինելիությունը*, *շարժումը*, *պատմական գործընթացը* և այլն: Ավելին՝ դրանք ուղեկցվում են հիմնավորումներով, օրինակ՝ «եթե պատմությունը զարգացում չլիներ, այլ ընդամենը միմյանց հետ միայն

---

[6] Մեջբերված է ըստ՝ Pachter H. M., "Defining an Event: Prolegomenon to Any Future Philosophy of History", *Social Research*, Vol. 41, No. 3 (Autumn 1974), էջ 444:

[7] *The Letters of Jacob Burckhardt*, translated by Alexander Dru, London: Routledge and Kegan Paul, 1955, էջ 21:

[8] Droysen J. G., *Grundriss der Historik*, Leipzig, 1882, էջ 8:

[9] Տե՛ս, օրինակ, Սոլովյով Վլ., *Ներամբողջական գիտելիքի փիլիսոփայական հիմունքները*, թարգմ.՝ Դ. Մոսինյան, Եր., «Լուսաբաց», 2013; Карсавин Л. П., Философия истории, СПб, АО Комплект, 1993; Лосев А. Ф., *Античная философия истории*, М., «Наука», 1977:

արտաքնապես կապված երևույթների հերթափոխություն, ապա պարզ է, որ հնարավոր չէր լինի խոսել որևէ ընդհանուր նպատակի մասին»[10]: Այստեղ, սակայն, թաքնված է մի վտանգ. գուցե այդ հասկացությունները հորինված են ոչ մի բան մտածելու համա՞ր, ինչպես որ որոշ իրավիճակներում լինում են նկարագրող բազում բառեր, բայց չի լինում հասկացություն: Բացի դրանից, արժե հաշվի առնել պոպպերյան այն դիտարկումը, որ փիլիսոփայության մեջ առհասարակ ուսումնասիրվում են հարցերը, ոչ թե առարկաները կամ հասկացությունները. ուրեմն եթե կա հարցը, հարկավոր է գտնել դրա պատասխանը: Իսկ թե մինչև ուր կարող են հասնել այդ հարցերը, և ինչ կարելի է ակնկալել դրանցից՝ մնում է առկախված: Նույնքան խնդրահարույց է նաև բադենյան դպրոցի՝ պատմաբանի համար մեթոդներ ստեղծելու մոտեցումը: Բայց չէ՞ որ տեղին կլինի օգոստինոսյան ոճով ասելը, որ պատմաբանը գիտի, թե ինչ է պատմությունը, քանի դեռ իրեն հարց չի ուղղվել այդ մասին, կամ առավել խորքային՝ «պատմաբան լինելուն խանգարում է պատմությունը»[11]: Պատմաբանին մեթոդ տալ ուսումնասիրություն կատարելու համար՝ նույնն է, թե հազարոտնուկին քայլաշար տալ տեղից տեղ շարժվելու համար:

Պատմությունը և պատմության փիլիսոփայությունը ստեղծված անորոշ վիճակից ու ճգնաժամից դուրս բերելու վերջին փորձերը եղել են XX դարում, երբ մի շարք ուղղություններ ու հայեցակարգեր, առաջնահերթությունը տալով պատմության այս կամ այն փիլիսոփայական հայեցակերպին, առաջադրեցին տարբեր հարացույցեր: Դրանցից արժե առանձնացնել հատկապես Աննալների դպրոցը, նարատիվիստական (պատումնային) շրջադարձը, Ֆուկոյի դիսկուրս-վերլուծությունը, էկզիստենցիալիստական պատմափիլիսոփայությունը, որոնք այս կամ այն ձևով վերլուծվել են ատենախոսության մեջ:

Հայ իրականության մեջ թեև պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծությանն ուղղակի անդրադարձ չի եղել, բայց, այնուամենայնիվ, այդ հայեցակերպերի խնդրի տարբեր կողմերին անդրադարձել են Հ.

---

[10] Սոլովյով Վլ., *Ներամբողջական գիտելիքի փիլիսոփայական հիմունքները*, էջ 13-14:

[11] Սվասյան Կ., «Ոգու գիտությունները առանց գիտության և ոգու», *Հոդվածներ*, Եր., «Անտարես», 2014, էջ 246:

Գաբրիելյանը[12], Հ. Գևորգյանը[13], Ս. Զաքարյանը[14], Ս. Խաչատրյանը[15], Գ. Խուդինյանը[16], Ս. Հովհաննիսյանը[17], Ռ. Միրումյանը[18], Մ. Նշանեանը[19], Ա. Ոսկանյանը[20], Ա. Ստեփանյանը[21], Ռ. Քոչարյանը[22] և այլք, որոնց գաղափարների լուսաբանումը բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով տեղ են գտել ատենախոսության մեջ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Նկարագրված իրավիճակը բավարար է պնդելու համար, որ պատմության առնչությամբ առաջացող փիլիսոփայական հարցերի համակարգման և վերլուծության, ինչպես նաև դրանց հնարավոր պատասխանների ուրվագծման կարիք կա: Ուստի հետազոտության նպատակն է՝ որոշակիություն մտցնել պատմության փիլիսոփայության ոլորտում՝ բացահայտելով, վերհանելով և նկարագրելով պատմության փիլիսոփայական հնարավոր հայեցակերպերը և մեթոդաբանական վերլուծության ենթարկել դրանք:

Նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. որոշարկել և համեմատական վերլուծության ենթարկել պամության փիլիսոփայական հայեցակերպերը, ձևակերպել դրանցից բխող հիմնական փիլիսոփայական խնդիրները և դասակարգել դրանք,

2. որոշակիացնել պատմության, պատմագիտության և պատմության փիլիսոփայության ոլորտների փոխհարաբերությունները,

---

[12] Գաբրիելյան Հ., *Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն*, Եր., «Միտք», 1966:

[13] Գևորգյան Հ. Ա., *Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ*, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005:

[14] Զաքարյան Ս., *Հայկական վերածննդի հարցը (մեթոդաբանական վերլուծություն)*, Եր., «Նոյյան տապան», 2006:

[15] Խաչատրյան Ս., «Ֆ. Նիցշեի պատմափիլիսոփայական հայացքները», *Բանբեր Երևանի համալսարանի*, 3 (87), 1995թ., էջ 46-55:

[16] Խուդինյան Գ., «Պատմության գաղափարը Յոհան Դրոյզենից մինչև Ռոբին Քոլինգվուդ: Մաս առաջին», *Վէմ*, թիվ 2 (46), ապրիլ-հունիս, 2014, էջ 12-34:

[17] Հովհաննիսյան Ս., *Աննալների դպրոցը և պատմության գրության կերպերը*, Եր., Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 2022:

[18] Միրումյան Ռ., *Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ: Մեթոդաբանական վերլուծություն*: Եր., «Նոյյան տապան», 2003:

[19] Նշանեան Մ., *Պատկեր, պատում, պատմութիւն, հ. 1: Փիլիսոփայական բարեկամութիւն մը*, Եր., Ակտուալ արվեստ, Հովհաննիսյան ինստիտուտ, 2015:

[20] Ոսկանյան Ա., *Հասկացման անխուսափելիությունը*, Եր., ԵՊՀ հրատ., 2015:

[21] Ստեփանյան Ա., *Պատմության հետագիծը: Գործք, գրույթ, իմաստ*, Եր., Փրինթինֆո, 2014:

[22] Քոչարյան Ռ., *Պատմությունը և հերմենևտիկան. Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը*, Եր., Փրինթինֆո, 2016:

3. առանձնացնել պատմության փիլիսոփայական հայեցակերպերի վերլուծության պատմական և տրամաբանական հատույթները՝ որոշակիացնելով դրանց հարաբերությունները,

4. լուսաբանել մի կողմից՝ պատմության և պատմագիտության փոխհարաբերությունները, մյուս կողմից՝ պատմության իրողութենական և գրութենական մակարդակների առանձնահատկությունները,

5. հետազոտել ու ներկայացնել պատմության իմաստի և պատմական ընթացքի տրամաբանության հիմնական ըմբռնումները,

6. պարզել պատմության ժամանակային, աշխարհագրական, զուտ բովանդակային վերաբերելիության սահմանների, այդ թվում համաշխարհային պատմության հնարավորության հարցերի շուրջ ձևավորված փիլիսոփայական ուսմունքների հիմնավորվածության ու փաստարկվածության աստիճանը:

Հետազոտության մեթոդաբանությունը: Նշված խնդիրների լուծումը պահանջում է համակարգային մոտեցում, որը պիտի մասնավորեցվի համակարգային մեթոդի կիրառումներում: Համակարգային մեթոդն այս համատեքստում նշանակում է, որ հաշվի են առնված փիլիսոփայական գիտակարգերը և դրանց դիտանկյունից վերհանված են պատմության հնարավոր բոլոր հայեցակերպերը: Ըստ այդմ, կարելի է առանձնացել չորս հիմնական հայեցակերպ՝ *գոյաբանական*, որի կենտրոնական խնդիրը «ի՞նչ է պատմությունը որպես այդպիսին» հարցադրումն է, *իմացաբանական*, որտեղ առանցքայինը «ինչպե՞ս է հնարավոր պատմությունը և պատմագիտությունը» հարցն է, *տրամաբանական* կամ *բարոյագիտական*, որ կոչված է պատասխանելու «իմաստ ունի՞ պատմությունը, և ինչպե՞ս է ծավալվում այն, ի՞նչ արժեք ունի պատմությունը» հարցերին, և վերջապես՝ *սոցիալ-փիլիսոփայական* կամ *քաղաքագիտական*, որի առանցքը «ո՞ւմ համար գոյություն ունի պատմությունը» հարցն է, կամ այլ կերպ՝ պատմության և իշխանության փոխհարաբերության խնդիրը: Ասվածը լիովին չի համընկնում, բայց համահունչ է նաև Դավիթ Անհաղթի՝ արիստոտելյան ազդեցությամբ առաջադրած մեթոդաբանությանը, ըստ որի՝ յուրաքանչյուր առարկայի հետազոտություն պահանջում է պատասխանել հետևյալ չորս հարցերին՝ գոյություն ունի՞ արդյոք, ի՞նչ է, ինչպիսի՞ ինչ է և ինչի՞ համար է[23]: Իհարկե, բացի նկարագրված ընդհանուր մոտեցումից ամեն

[23] Տե՛ս Դավիթ Անհաղթ, *Երկեր*, թարգմ.՝ Ս. Արևշատյան, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 35:

հարցի քննարկման ժամանակ կիրառվում են նաև պատմահամեմատական, քննադատական, ֆենոմենոլոգիական, հերմենևտիկական մեթոդները՝ կախված առարկայի յուրահատկությունից:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ, որտեղ առաջին անգամ խնդիր է դրվել ի մի բերել պատմության փիլիսոփայական հայեցակերպերը և մեթոդաբանորեն վերլուծել դրանք, առաջադրվել և հիմնավորվել են մի շարք գիտական նորույթներ պարունակող դրույթներ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

1. Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի համակողմանի վերհանումը, որոշարկումը և դասակարգումը հնարավորություն են տալիս պատմության փիլիսոփայության մեջ առկա բոլոր հարցերը հանգեցնել դրանց և երկխոսության դաշտ ստեղծել ձևավորված պատասխան-ուսմունքների համար:

2. Պատմության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և քաղաքագիտական հայեցակերպերը սպառում են պատմությունը փիլիսոփայորեն մտածելու դիտանկյունները: Այլ կերպ՝ պատմությանն առնչվող փիլիսոփայական խնդիրները հանգեցնելի են պատմության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և սոցիալ-փիլիսոփայական կամ քաղաքագիտական հայեցակերպերին:

3. Պատմության փիլիսոփայության ոլորտի միասնականությունը հնարավոր է որպես պատմության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և քաղաքագիտական հայեցակերպերի դիրքերից իրականացվող երկխոսություն:

4. Պատմության փիլիսոփայական յուրաքանչյուր հայեցակերպ ամբողջական է դառնում, եթե դիտարկվում է մյուս հայեցակերպերի հետ հարաբերության մեջ, իսկ դրանցից բխող խնդիրները հնարավորինս որոշարկվում են մյուս խնդիրների հաշվի առնումով:

5. Տարբեր պատմափիլիսոփայական ճամբարներում (մասնավորապես՝ վերլուծական, մայրցամաքային) ձևավորված ուսմունքները համադրելի են դառնում պատմության փիլիսոփայական հայեցակերպերի դիտանկյունից, որտեղ էական է դառնում բուն խնդիրը, ոչ թե այս կամ այն մեկնակետը:

6. Պատմության փիլիսոփայական որևէ հայեցակերպ ճանաչողական առումով ինքնին առաջնային չէ, առավելություն չունի մյուսների նկատմամբ:

Ատենախոսության տեսական ու գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ առաջ քաշված հարցադրումները, դրանց վերլուծությունները և

հետազոտական արդյունքները կնպաստեն պատմության փիլիսոփայության ոլորտի համակարգմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ոլորտում առաջացող անորոշությունները մեթոդաբանորեն լուսաբանելուն: Առաջադրված մեթոդաբանությունը պատմական նյութի վրա փոխադրելու պարագայում առավել խորքային կդառնան նաև պատմագիտական խնդիրներն ու դիտարկումները, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի խուսափել իրադարձութենակենտրոն պատմությունից և մուտք ունենալ դրանից անդին իրողություններին:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են տարբեր միջազգային գիտաժողովներում ու սեմինարներում: ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնում ատենախոսության վերնագիրը, պլանը և ընդհանուր կառուցվածքը քննարկվել է 2023 թ. սեպտեմբերին, ամբողջական շարադրանքը՝ 2023 թ. դեկտեմբերին, իսկ 2024 թ. ապրիլի 4-ին վերջնական քննարկումից հետո ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորսական ենթագլուխ պարունակող չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 270 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտվող թեմայի արդիականությունը և հրատապությունը, ներկայացվում է դրա տեսական մշակվածության աստիճանը, ձևակերպվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, առանձնացվում են ատենախոսության գիտական նորույթն արտահայտող հիմնական դրույթները: Ներկայացվում է ատենախոսության տեսական ու գործնական նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը:

Առաջին գլուխը վերնագրված է *Պատմության գոյաբանական հայեցակերպը. ի՞նչ է պատմությունը*: Այստեղ առանձնացվում և որոշարկվում է պատմության գոյաբանական հայեցակերպը և ուրվագծվում են պատմությունը իբրև իրողու-

թյուն մտածելի դարձնելու հնարավորություններն ու հեռանկարները: Ձևակերպվում է չորս հիմնական խնդիր, և հիմնավորվում է, որ պատմության գոյաբանական հայեցակերպին վերաբերող բոլոր խնդիրները հանգեցնելի են այդ չորսին:

Պատմության ենթական ենթագլխում որոշակիացվում է այն հարցը, թե մի կողմից՝ ինչն է ենթակա պատմականացման, իսկ մյուս կողմից՝ ինչը կամ ով է հանդես գալիս պատմության անունից: Այստեղ, ի տարբերություն պատմագիտության առարկայի խնդրի, ընդգծվում է ընդհանրապես պատմության գոյությունը հնարավոր դարձնող իրողության կարևորությունը: Խնդրո առարկայի բարդությունն այն է, որ պատմությունը վերաբերում է ոչ թե ինքնին անցյալին, այլ անցյալի ինչ-որ իրադարձությունների կամ եղելությունների, որոնք պատմության մեջ *ներկայ*անում են, դառնում են ներկայի մի մաս, իսկ անցյալը՝ որպես այդպիսին, անվերջորեն խզում է իր կապը ներկայի հետ: Ուստի պատմության ենթական ոչ թե բուն անցյալն է, այլ այն եղելությունները, ամենայն հավանականությամբ հոգեկան, որոնք պայմանավորում են անցյալի լինելությունը: Այդ եղելությունների ընտրությունից հետո է որոշակիորեն ի հայտ գալիս պատմության ենթակայի կամ սուբյեկտի հարցը, այն է՝ ո՞վ կամ ի՞նչն է որոշում որևէ եղելության պատմական լինելը: Ասվածից պարզ է դառնում, որ պատմության ենթակայի շուրջ խորհելիս «ենթական» երկու իմաստ է ձեռք բերում, նախ՝ որպես պատմությանը ենթարկվող, այսինքն՝ այն, ինչը ենթակա է պատմականացման, այնուհետև՝ իբրև ակտիվ սուբյեկտ, որն ունակ է պատմելու իր պատմությունը: Լոկ պատմելով է, որ ենթական դառնում է ակտիվ գործոն պատմության մեջ: Ընդ որում՝ սեփական պատմությունը պատմելը ենթադրում է նաև ուրիշի կամ ուրիշների պատմության ներկայացում, ինչը, իհարկե, հանգեցնում է ենթակաների բախման, քանի որ տարբեր պատմական աշխարհներ տարբեր ենթականերով են ներկայանում: Եվ ի դեպ, առանձին ու մեծ թեմա է բացվում, երբ հարցը դրվում է ոչնչացված ենթակայի (մասնավորապես՝ աղետի վկայի կամ վերապրողի) պատմության մասին: Քննական վերլուծության ենթարկելով պատմափիլիսոփայական մշակույթում առաջադրված պատմության տարբեր ենթակաների հնարավորությունները՝ մարդ, ոգի, քաղաքակրթություն, հասարակություն և այլն, առաջ է քաշվում այն դրույթը, որ այդ ենթական չկա պատրաստի վիճակում, այլ իր լինելության համար ենթադրում է մտավոր ճիգ և համապատասխան լեզվագիտակցություն: Պատմության ենթակայի վերհանման անհրաժեշտությունն առաջնային նշանակություն ունի, քանի որ պատմությանը վերաբերող բոլոր տեսական հարցերը այս կամ այն կերպ առնչվում են դրա հետ: Ընդ որում, պատմության ենթակայի խնդրին ճշմարիտ-

սխալ չափորոշիչներով մոտենալը հեռանկարային չէ, քանի որ առաջադրված պատասխաններից յուրաքանչյուրը յուրօրինակ հորիզոն է պատմության գոյաբանական հարցերի շուրջ խորհրդածելու համար: Այդ պատասխանները ոչ թե էմպիրիկ հետազոտության արդյունք են, այլ որոշակի փիլիսոփայական դիրքորոշում, որոնցից կախված են պատմությանն առնչվող մյուս հարցերի լուծումները:

Նախապատմություն և պատմություն ենթագլխում քննարկվում է ենթավերնագրում ամրագրված հասկացությունների փոխհարաբերության հարցը: Նախապատմությունը, որ, ըստ սահմանման, պիտի նախորդեր պատմությանը, մտածելի է դառնում միայն պատմությամբ, որովհետև գոյաբանորեն ածանցյալ է: Պատմության նկատմամբ պատմական հայացքը կանգնեցնում է որոշակի սահմանների առաջ, երբ գոյաբանական-իրողութենական թելը կտրվում է: Այդտեղ է, որ մեթոդաբանական անհրաժեշտություն է նկատվում ընդունել նախապատմության՝ իբրև գոյության յուրահատուկ կերպի անպայմանականությունն ու անխուսափելիությունը: Նախապատմությունը հանդես է գալիս որպես յուրօրինակ «ինքնին իր», որը հնարավոր չէ ճանաչել, բայց որի գոյությունը, առնվազն մեթոդաբանական առումով, կասկածից վեր է: Արտաքին դիտարկմամբ՝ խնդիրը համեմատաբար պարզ է. գրի և պատմական գիտակցության շնորհիվ նախապատմական շրջանը շարունակում է պատմությունը: Սակայն ավելի կարևոր է հարցի ներքին հատույթը, այն է՝ ի՞նչ է տեղի ունեցել նախապատմության մեջ, որ գոյաբանորեն հնարավոր է դարձել պատմությունը: Հիմնավորվում է այն դրույթը, որ պատմությունը գոյ(աբան)ական ինքնություն է ձեռք բերում, երբ տեղակայվում է այնպիսի համակարգում, որն ամենայն ճանաչողություն ենթարկում է պատմականության սկզբունքին, պատմագրումը դարձնում է գիտելիքի լինելիության հիմնական ձև: Ընդհանրապես պատմության գոյաբանական հայեցակերպն առավելապես միտված է պատմականը կազմավորող բաղադրիչները վերհանելուն, որոնցով միջոցով պատմությունն իրական ու վերաբերելի է դառնում և դրանով տարբերվում լեզվական այլևայլ դրսևորումներից: Պատմափիլիսոփայության ոլորտում նախապատմությունը գոյաբանական բանավեճերի մեթոդաբանական այն հիմնաքարն է, որը հաղորդակցման հիմք է դառնում պատմության տարբեր ըմբռնումների համար: Ոստի յուրաքանչյուր պատմության հասկացում անխուսափելիորեն պահանջում է դրա նախամիջավայրի ուրվագծում, որը ոչ միայն ժամանակային իրողություն է, այլև գոյաբանական, որ կարող է հասնել մինչև ժամանակակից շրջան:

Պատմականացման մեկնաբանությունները. մոնիզմ և պլյուրալիզմ ենթագլուխը նվիրված է այն փիլիսոփայական հարցին, թե արդյոք պատմականացումն ամենուր նույն կերպ է տեղի ունենում: Մեկ այլ դիտանկյունից՝ հարցը հետևյալն է. մի կողմից՝ պատմությունը ներկայանում է որպես մեկ միասնություն, բայց մյուս կողմից՝ այն առանձին երկրների, իրադարձությունների, գաղափարների ամբողջություն է, ինչի՞ հիման վրա է հնարավոր որևէ շրջանի մարդկանց մասին ընդհանրապես պատմական դատողությունը, կամ ինչպե՞ս է հնարավոր եզակի դեպքերի փոխադրումն ամբողջ պատկերի վրա: Այս եզակիի և բազմազանի փոխհարաբերության հետ կապված հարցի հնարավոր երկու պատասխանները հայտնի են *մոնիզմ* և *պլյուրալիզմ* անվանումներով. առաջինի համաձայն՝ պատմական գործընթացները յուրաքանչյուր ժամանակահատվածում ամենուրեք ունեն նույն որակական որոշակիությունը, և ուրեմն կա համընդհանուր պատմություն կա՛մ որպես իրականություն, կա՛մ առնվազն որպես հնարավորություն, իսկ պլյուրալիստական մեկնաբանությամբ՝ պատմականացումը թե՛ տարածականորեն, թե՛ ժամանակայնորեն յուրակերպ է, և չկա մեկ միասնական պատմություն: Գոյաբանության ոլորտից պատմափիլիսոփայական տիրույթ փոխառված *մոնիզմ* եզրույթը կոչված է մատնանշելու այն միակ, եզակի հիմքը, որից սկիզբ է առնում պատմականացումը: Ընդ որում՝ այդ հիմքը կարող է լինել նյութական կամ ոգեղեն և, հետևապես, հնարավոր է խոսել մատերալիստական և իդեալիստական մեկնաբանությունների մասին: Պլյուրալիստական մոտեցումը մերժում է մեկ-միասնական պատմության հնարավորությունը՝ մեկնարկելով դրույթից, որ համամարդկային քաղաքակրթություն չկա և չի կարող լինել: Նշված հայեցակարգերը քննական վերլուծության ենթարկելուց, կողմ և դեմ փաստարկները որոշարկելուց հետո առաջադրվում է տեսակետ, որ մեթոդաբանական հարթակի կարիք կա, որտեղ առկա հայեցակարգերը կքննվեն ոչ այնքան վերաբերելիության, որքան պատմական իրողությունները հասկանալու ներքին հնարավորությունների դիտանկյունից: Պատմականացման բնույթի խնդիրը գոյաբանական է ըստ էության, և այս իմաստով պատմության փիլիսոփայական իմաստավորման և ամենայն պատմության կայացման գործում սկզբունքային դեր է ստանձնում:

Պատմության պարբերացման խնդրի գոյաբանական հիմքը ենթագլուխը վերաբերում է գոյաբանական հայեցակերպի որոշարկման ճանապարհին առանցքային խնդիրներից մեկին՝ սահմանազատմանը. նախ՝ պատմականի և ոչ պատմականի, ապա՝ պատմականի տարբեր դրսևորումների միջև: Պատմական գիտակցության դիտանկյունից ամենայն իրողություն պատմական է կամ էլ դառնում

է այդպիսին պատմական հայացքի ներքո, ոչ պատմականը գոյություն չունի ըստ էության, ուստի պատմության մեջ ընդգրկելու նպատակով իրողությունների ընտրությունն անհիմն է: Այնուամենայնիվ, պատմության մեջ անխուսափելիորեն կան առավել կամ պակաս ընդգծված իրողություններ կամ իրադարձություններ, որոնք պատմականության տեսանկյունից աստիճանակարգվում են կարևորության սանդղակում: Պատմությունը որպես կանոն ներկայացվում է իբրև անընդհատական հոլովույթ, բայց միևնույն ժամանակ այդ հոլովույթում հայտնվում են որոշակի խզումներ, որ նշանավորում են էական փոփոխություններ: Այլ կերպ՝ պատմականացումն այլ ընթացք է ստանում, ինչն այս կամ այն կերպ արտահայտվում է պատմագրության մեջ: Այստեղ բացի պատմագրության մեջ պարբերաշրջաններ առանձնացնելու մեթոդաբանական մոտեցման անհրաժեշտությունից, առկա է նաև գոյաբանական խնդիր, մասնավորապես՝ թե ինչ է տեղի ունենում բուն պատմական իրականությունում, որ խզում է առաջանում ժամանակների միջև, որ փոխվում է պատմական ընթացքը, որ պարբերաշրջաններ են առանձնանում: Մեթոդաբանական հարց է, որ պատմաբանի առաջադրած պարբերաշրջանները կարող են թույլ տալ կամ չտալ պատմությունը պատշաճ կերպով հասկանալ, բայց կա նաև գոյաբանական հատույթ, որ ինչ-որ փոփոխություն է տեղի ունենում հենց իրականության մեջ: Ընդ որում, առաջնայինն այն հարցը չէ՝ այդ փոփոխությունը մարդկային գիտակցության մեջ է, թե առարկայական աշխարհում, որովհետև մի կողմից՝ դրանք երկուսն էլ իրականություն են, մյուս կողմից՝ դրանք փոխպայմանավորող իրողություններ են: Խնդրի գոյաբանական շերտը նախևառաջ վերաբերում է ոչ թե մարդկանց և քաղաքական կամ տնտեսական պայմանների փոխհարաբերության մեջ դրանցից մեկի առաջնայնությանը, այլ այն գոյութենական հիմքին, որը պատմությունը պարբերացնելու անհրաժեշտություն է առաջացնում, անգամ եթե այդ պարբերաշրջանները համարվեն պայմանական ու հարաբերական, քանի որ առնվազն պատմության այդ բաժանումները կարելի է դիտարկել իբրև խզման կետ: Պատմությունը նոր հորիզոններ բացելու հնարավորություն է ձեռք բերում, երբ ընդգծվում է գոյաբանական հայեցակերպի առաջնայնությունը զուտ ժամանակագրության նկատմամբ: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որևէ պատմական պարբերաշրջանների փոխադրումը այլ միջավայր հղի է պատմությունը խեղաթյուրելու վտանգով: Պատմության պարբերացման խնդրի գոյաբանական հատույթի կարևորության շեշտադրումը կարող է կանխել մեթոդաբանական մակարդակում թույլ տրվող սխալների ի հայտ գալը:

Երկրորդ գլուխը խորագրված է *Պատմության իմացաբանական հայեցակերպը. ինչպե՞ս է հնարավոր պատմությունը*: Գլխում չորս առանձին խնդիրներով ցույց է տրված պատմության իմացաբանական հայեցակերպի յուրահատկությունները, մասնավորապես՝ պատմաճանաչողության ընթացքում ի հայտ եկող բարդություններն ու դժվարությունները: Պատմության իմացաբանական հայեցակերպը պահանջում է պատմաճանաչողության առանձնահատկությունների վերհանում, ինչն իր հերթին նպաստում է պատմության լինելության կերպի բացահայտմանը և, հետևաբար, պատմության փիլիսոփայության ոլորտում մի շարք բանավեճերի հարթմանը: Պատմության՝ իբրև իմացության առարկայի յուրահատկություններն ուղղակիորեն կախված են դրանք ճանաչելու հնարավորություններից: Ուստի իմացաբանական հայեցակերպն առանձին դիտանկյուն չէ, այլ էականորեն կապված է գոյաբանականին և նույնքան կարևոր է պատմության ու պատմագիտության հասկացման համար:

Պատմաճանաչողության առանձնահատկությունները ենթագլխում մասնավորեցվում են դժվարությունները, որ պայմանավորված են հատկապես պատմության՝ փորձի աշխարհում տրված չլինելու հանգամանքով: Եվ քանի որ պատմության պարագայում բացակայում է փորձի տիրույթը, հարցը դառնում է այն, թե ինչպես է ստուգվելու ենթադրյալ վերակառուցված պատմությունը՝ պատմագրությունը, ինչպես է այն հաստատվելու կամ հերքվելու, ինչն է համապատասխանելու կամ չհամապատասխանելու ներկայացված պատմությանը: Արխիվը չի կարող չափանիշ լինել պատմության համար, առավել ևս եթե հավելենք երկրորդ նկատառումը, այն է՝ պատմագրությունը աղբյուրներից անդին անցնելու դիտավորություն ունի: Պատմագրությունն ավելի շուտ աղբյուրների միջև առկա դատարկ տեղերը լրացնելուն է միտված, որոնք իրադարձություններ չեն ըստ էության, և հնարավոր չէ դրանք արձանագրել գրավոր աղբյուրներում: Այս առումով խիստ վիճարկելի է դառնում ընդհանրապես պատմության առարկայական գոյությունը և դրա, այսպես ասած, օբյեկտիվ, անաչառ ճանաչումը: Ստացվում է, որ պատմությունն ավելի շուտ փորձի սահմաններից դուրս անդրանցական գաղափար է, որը հնարավոր չէ շարադրել ու ավարտին հասցնել, քանի որ պատմական իրականությունն ունի տարբեր շերտեր, որոնք երբեմն չեն մեկտեղվում: Այս համատեքստում հիմնվելով բնագիտական և հումանիտար գիտելիքների միջև եղած տարբերությունների վրա, որ վերհանվել են տարբեր հայեցակարգերի շրջանակներում, ներկայացվում է այն գաղափարը, որ պատմաճանաչողությունը ենթադրում է որոշակի ապրու-

մակցում, քանի որ սոսկ դիտարկումը կամ դրա շուրջ դատողական խորհրդածումը, այսինքն՝ *բացատրությունը*, բավարար չեն պատմագիտական գիտելիքի զարգացման համար: Ավելին՝ պատմագիտական բացատրությունը անցյալի մակերեսային ներկայացում է, որ կարոտ է հերմենևտիկական ավանդույթով պարուրված *հասկացման* ու *մեկնաբանման*: Կարելի է մանրամասնորեն բացատրել իրավիճակը, բայց չհասկանալ այն, այսինքն՝ չյուրակերտել, չդարձնել սեփական ինքնության ու ճակատագրի, ասել է թե՝ պատմության մաս:

«Պատմական օրենք» հասկացության շուրջ ենթագլխում ներկայացվում է գերմանական *հասկացման* հարացույցին հակադրվող բացատրության անգլոամերիկյան *բացատրության* հարացույցը և, մասնավորապես, դրա շրջանակներում ծավալված պատմական օրենքի հնարավորության հարցի շուրջ Հեմփել-Դրեյ բանավեճը: Հիմնական հարցադրումը կարելի է ձևակերպել այսպես. կա՞ն պատմական օրենքներ, թե՞ ոչ, հնարավո՞ր է պատմագիտական բացատրություն առանց օրենքի, թե՞ ոչ: Հեմփելի համոզմամբ՝ տարբերություն չկա բնագիտության և պատմագիտության միջև: Պատմագիտական բացատրությունը ևս նպատակ է հետապնդում հիմնավորել, որ տվյալ երևույթը պատահական չէ, այլ հետևանք է որոշակի հանգամանքների կամ դիտավորությունների: Ստացվում է, որ նույն կարգի ընդհանուր օրենքներով է գործառնում և՛ բնագիտությունը, և՛ պատմագիտությունը: Խնդիրն այն է, որ վերջինիս շրջանակներում օրենքները հաճախ մնում են ոչ բացահայտ մակարդակում: Այնպիսի եզրույթների կիրառումը, ինչպիսիք են «հետևաբար», «այդ պատճառով», «որովհետև», «ակնհայտ է» և այլն, վկայում է թաքնված օրենքների առկայության մասին: Ըստ Դրեյի՝ պատմության փիլիսոփայության համար ուղղակիորեն վտանգավոր է պատմագիտական բացատրությունը օրենքներին հանգեցնելու դիրքորոշումը, որովհետև դա անճշտությունների է հանգեցնում, քանի որ պատմագիտական բացատրությունը չունի և փորձում անմիջականորեն չտրված առարկայի պատճառով չի կարող ունենալ բնագիտության խստությունը: Շարադրելով կողմերին բնորոշ հիմնական փաստարկները՝ ձևակերպվում է եզրակացություն, որ իմացաբանական հայեցակերպի այս հատույթը՝ պատմական օրենքի լինել-չլինելու հարցը, էական նշանակություն ոչ միայն պատմության փիլիսոփայության, այլև բուն պատմագրության համար: Օրենքի, օրինաչափության բացահայտումը տևականորեն համարվել է պատմագիտության գլխավոր գործառույթը, մինչդեռ մի կողմից՝ մի շարք եզակի իրողությունների ի հայտ գալը, մյուս կողմից՝ ընդհանրացնող օրենքի սկզբունքով պատմության մոտենալու

թերությունների մատնանշումը վերափոխում են պատկերը և նոր մարտահրավերներ բացում պատմափիլիսոփայական մտքի առջև:

Պատմության վերակառուցո՞ւմ, կառուցո՞ւմ, թե՞ ապակառուցում ենթագլուխը մեծ հաշվով պատասխանի փորձ է հետևյալ հարցին. պատմությունը իբրև իրողություն կա պատմագրությունից առա՞ջ, թե՞ հետո: Պատմության հետ առերեսումը տեղի է ունենում տեքստերի միջոցով, և հարցն այն է, թե կա արդյոք դրանց համապատասխանող որևէ իրողություն: Այլ կերպ՝ պատմագիտական տեքստը վերակառուցո՞ւմ է եղած իրողությունը՝ անցյալը, թե՞ հիմնվելով ինչ-որ նյութերի, աղբյուրների, արխիվների վրա՝ կառուցում է պատմություն, որ ստուգելի չէ, և հետևաբար՝ հնարավոր չէ պարզել դրա վերաբերելիությունը: Կամ էլ գուցե պատմագիտության խնդիրը սովորույթների ապակառուցումը, կազմաքանդո՞ւմն է: Այս տարբերակներից յուրաքանչյուրն ունի հեռուն գնացող հետևանքներ, որոնք արտահայտվում են այն հարցադրման մեջ, թե ինչով են իրարից տարբեր գեղարվեստական և պատմագիտական տեքստերը: Նշված պատասխանները կարելի է ներկայացնել իբրև *ռեկոնստրուկտիվիստական*, *կոնստրուկտիվիստական* և *դեկոնստրուկտիվիստական* հայեցակարգեր: Առաջինը, որի հիմնական նպատակը պատմության վերակառուցելիության հիմնավորումն է, ըստ էության ներկայացնում է պատմության ու պատմագիտության նախնական ընկալումը: Դա իր զարգացման գագաթնակետին է հասել պատմագրության պոզիտիվիստական մոդելում, որը ենթադրում է մի քանի հիմնարար դրույթ, մասնավորապես՝ որ պատմությունը գիտություն է անցյալի մասին, և պատմագիտական ուսումնասիրությունների առարկան գրավոր աղբյուրներում ամրագրված անցյալն է, իսկ հետազոտության նպատակը, այսպես ասած, քաղաքական և ռազմական «մեծ» իրադարձությունները վերհանելն է: Պատմության վերակառուցելիության հետ կապված խնդիրների լուծման ջանքերը հիմք են դառնում կոնստրուկտիվիզմի ձևավորման համար: Վերջինս ուղղակիորեն կապված է վերլուծական փիլիսոփայության մեջ տեղի ունեցած «լեզվաբանական շրջադարձ» կոչվող շարժման հետ, որը 1960-ական թվականներին փոխադրվում է նաև պատմության ոլորտ՝ ստանալով «նարատիվիստական շրջադարձ» անվանումը: Դրա շրջանակներում պատմությունը դիտարկվում է սոսկ որպես պատում (նարատիվ), այսինքն՝ ոչ թե անցյալի նկարագրություն՝ ինչպես այն եղել է, այլ լեզվի և դրա տրամաբանության սահմաններում կառուցված տեքստ, որի նպատակն է պատմության ընկալողին մեկնաբանությամբ կողմնորոշելն է ճշմարտությանը հասցնելու փոխարեն: Պատմության ապակառուցման կամ կազմաքանդման գաղափարը էականորեն կապված է այն

գաղափարի հետ, որ պատմության ընկալումը լեզվական կառույցի կիրառությունների արդյունք է, ուստի ոչ միայն լեզվի և անցյալի տարբերության հարց է դրված, ինչպես կոնստրուկտիվիստների պարագայում է, այլև դրանք ընդհանրապես տարբեր աշխարհների են պատկանում: Ներկայացնելով այս ուղղություններին կողմ և դեմ փաստարկները՝ առաջադրվում է այն տեսակետը, որ պատմագրության հնարավորության հարցին իբրև պատասխան ձևավորված բոլոր ուսմունքներն էլ մի կողմից՝ փաստարկված են, բայց մյուս կողմից՝ խոցելի: Արտաքուստ հակասական թվացող այդ ուսմունքների՝ մեկ դաշտում դիտարկելը հնարավորություն կտա կենդանի պահել պատմությունն ու պատմագրության ընթացքը և կամուրջ նետել դեպի պատմության փորձընկալում:

Պատմության փորձընկալման հնարավորությունը ենթագլխում անդրադարձ է կատարվում այն հարցին, թե ինչպես է պատմությունը տրվում կամ ներկայանում գիտակցությանը: Լեզվի և իրականության, անցյալի և ներկայի տարաբաժանումները տեղի են ունենում հետահայաց կերպով, բայց նախապես կա համադրական, չտարորոշված փորձընկալում, որով և որի միջոցով է հասանելի դառնում աշխարհի ճանաչումը. տվյալ ենթագլուխը նպատակ է հետապնդում բացորոշել ու որոշարկել հենց այդ փորձընկալումը: Պատմության մեջ ամրագրված անցյալն ինքնին անցյալ չէ, քանի որ փորձառության մեջ ընդհանրապես անցյալ չկա, ավելի ճշգրիտ՝ ժամանակային բաժանման ընկալում չկա: Լեզվականորեն արտահայտված անցյալի և ներկայի երկու աշխարհները փորձառության մեջ միախառնված են, հետևաբար՝ անցյալի՝ ներկա հասնելու և պատմական դառնալու խնդիր չկա, պատմության և անցյալի ներկայում լինելությունը միաժամանակ է: Ֆենոմենոլոգիայի դիտանկյունից ներկայացնելով խնդրի դրվածքը՝ վերհանվում են այն մտավոր ջանքերը, որոնք միտված են եղել մտածել պատմությունը իբրև փորձ: Ընդ որում՝ խոսքը ոչ թե հիշողության, այլ ավելի շուտ ինքնին անցյալի վերապրման կամ անցյալում եղած որոշակի պատմական գիտակցությանը կամրջվելու մասին է: Բացահայտելով, որ ներկայումս այդօրինակ հայացքներն առավելապես ապաստան են գտել հոլանդական միջավայրում, առաջադրվում է դիտանկյուն, որ կարելի է խոսել պատմության փիլիսոփայության ֆենոմենոլոգիական հոլանդական դպրոցի մասին՝ հանձինս Յոհան Հայզինգայի, Ֆրանկ Անկերսմիթի, Էելկո Ռունիայի: Եվ թեև պատմության ֆենոմենոլոգիան դեռևս հեռու է կայացած ու ավարտուն գիտակարգ լինելուց, բայց դրա դիրքերից արվող հետազոտությունները և պատմագրության վերաիմաստավորումները նոր հեռանկարներ են բացում պատմափիլիսոփայական գիտելիքի ձևավորման համար:

Երրորդ գլուխը խորագրված է *Պատմության տրամաբանական-բարոյագիտական հայեցակերպը. իմաստ ունի՞ պատմությունը*: Այս հայեցակերպի դիտանկյունից՝ պատմությունը նախևառաջ գոյություն ունի իբրև որոշակի իմաստ՝ հիմքում ունենալով այն փաստարկը, որ հակառակ դեպքում այն կներկայանար տարատեսակ եղելությունների կամ հիշողությունների տեսքով, և հիմնավոր չէր լինի դրանք միավորելու միտվածությունը: Իրողությունները, եղելությունները պատմականորեն հասկանալի են, երբ ընկալվում են իմաստի պրիզմայով, քանի որ վերջինիս է հասկացման նախապայմանը: Ուստի պատմության գաղափարի ներկայացումը որոշակիորեն նշանակում է կայացնել պատմության իմաստի պատմությունը: Պատմության իմաստի խնդիրը զուտ պատմական տեսանկյունից ենթադրում է *պատմության տրամաբանություն*, այսինքն՝ իմացական ոլորտ, որտեղ բացահայտվում են պատմության զարգացման նախադրյալներն ու վերջնական նպատակակետերը: Իսկ մարդաբանական տեսանկյունից այն ենթադրում է *պատմության բարոյագիտություն*, այսինքն՝ բնագավառ, որտեղ պատմության իմաստի հետ հարաբերության մեջ գնահատվում են մարդկային արարքները: Այս առումով հատվում են տրամաբանությունն ու բարոյագիտությունը. եթե առաջինը միտված է ճշմարիտ նախադրյալներից ճշմարիտ եզրակացության հանգելու օրենքների բացահայտմանը, ապա երկրորդը նույնն իրականացնում է մարդկային հարաբերությունների համատեքստում՝ ենթադրյալ Բարիքի դիրքերից վերհանելով «լավագույն» արարքի սկզբունքը: Ուստի «պատմությունը իմաստ ունի՞» հարցադրումը ենթադրում է մի կողմից՝ պատմական հոլովույթի *տրամաբանություն*, մյուս կողմից՝ այդ տրամաբանության հետ հարաբերակցության մեջ մարդկային արարքի որոշարկման միջոց՝ կազմելով պատմության տրամաբանական-բարոյագիտական հայեցակերպի առանցքը: Որպես նշված հարցին պատասխաններ՝ ներկայացված են պատմության ընթացքում ձևավորված չորս հիմնական հարացույցեր:

Երրորդ գլխի առաջին ենթագլուխը կոչվում է *Անտիկ պատմության փիլիսոփայություն. գոյության և չգոյության սահմանագծին*: Վերնագրի ձևակերպումից արդեն իսկ նկատելի է, որ այդտեղ հիմնական նպատակն անտիկ մշակույթում պատմության իմաստի առկայության պարզաբանումն է: Եթե խնդրո առարկան ձևակերպենք հարցերով, կարող է ստացվել նաև այսպես. ինչպե՞ս է հնարավոր անտիկ պատմության փիլիսոփայությունը, կամ՝ ինչո՞ւ գոյություն չունի անտիկ պատմության փիլիսոփայություն: Հարկ է նշել, որ ո՛չ Հունաստանում, ո՛չ Հռոմում պատմության նկատմամբ փիլիսոփայական անդրադարձ առանձնապես չի եղել,

ինչը բավարար հիմք է հունական փիլիսոփայությունը «հակապատմական» կոչելու համար: Հույնը չի անդրադառնում սեփական պատմությանը (արձանագրելուց զատ), որովհետև (եվրոպական լեզվով ասած) իր ինքնությունը ոչ թե *կայանում է* պատմական ժամանակում, այլ միանգամից հայտնակերպվում է բանական ճանաչողությամբ: Սա նշանակում է, որ ոչ թե հունական միջավայրն ապաառասպելական է, այլ որ հույնն ապրում էր առասպելական պատմության ու ժամանակի մեջ, որտեղ բոլոր հարցերը, այդ թվում՝ իմաստի, ենթարկվում էին ամենազորեղ Ճակատագրին: Այս առումով անտիկ շրջանում, կարելի է ասել, պատմության իմաստի խնդիրն այդպես էլ մնաց առասպելի շրջանակներում՝ չորոշակվելով իբրև առանձին ու ինքնուրույն հարցադրում: Ժամանակակից աշխարհում անտիկ շրջանին դիմելն ունի տարբեր պատճառներ, որոնց թվում պատմության անտիկ ըմբռնման յուրացումն է, որի դիրքերից հնարավոր պիտի լինի ամենայն պատմության մեջ բացահայտել հավիտենականը՝ առասպելական, էպիկական այն հատույթը, որ պայմանավորում է մշակույթների դրսևորումները և ճակատագրի շարունակական լինելիությունը: Պատմության տրամաբանական-բարոյագիտական հայեցակերպն է իմաստ հաղորդում պատմությանն ու պատմագրությանը և այն խորապես կապում պատմությունը կրողների հետ:

Միջնադարյան փիլիսոփայությունը և պատմության քրիստոնեական իմաստը ենթագլխի առանցքային խնդիրը պատմության իմաստի քրիստոնեական ըմբռնման որոշարկումն է: Այստեղ մեկնակետ է այն դիրքորոշումը, որ միջնադարը ոչ միայն և ոչ այնքան տարածաժամանակային կոորդինատներով սահմանվող իրողություն է, որքան մտային կառույց, որը մատնանշում է կրոնական հավատքով ու հավաքական ստեղծագործություններով բնորոշվող քաղաքակրթական վիճակ: Միջնադարի հետ զուգորդվող առաջին իրողությունը քրիստոնեությունն է, որի շնորհիվ է հնարավոր դառնում մտածել համաշխարհային պատմությունը, քանի որ դրա շրջանակներում է առաջին անգամ առաջադրվում սկիզբ և ավարտ ունեցող համայն մարդկության գաղափարը: Ժամանակի ուղղագիծ բնույթը, երկնային և երկրային աշխարհների դուալիզմը, պատմության հնարավոր վախճանի ուսմունքը առկա էին նաև հինկտակարանային պատումներում, սակայն քրիստոնեությունը խնդիր էր դրել վերացնել տարածական և ժամանակային սահմանները՝ հիմք ստեղծելով համաշխարհային պատմության կայացման համար: Պատկերացումը, որ պատմական գործընթացը եզակի է և ունի որոշակի բարոյական նպատակ ու ուղղվածություն, Արևմուտքում առաջին անգամ հայտնվել է իբրև քրիստոնեական

դավանաբանություն: Այս փիլիսոփայական գաղափարները հեռանկարներ բացեցին միջնադարյան պատմագրության համար՝ Եվսեբիոս Կեսարացուց մինչև Բեդա Պատվելի և այլք, որոնք խնդիր էին դրել պատմության շարադրանքն իրականացնել համայն մարդկության դիտանկյունից և հիմնավորել, որ պատմության իմաստը մարդու նախապատրաստումն է փրկությանը: Սակայն հարկ է ընդգծել, որ թեև քրիստոնեությունն ինքը պատմական կրոն է և ներկայանում է հուդայականության առաջադրած պատմությունը շարունակելով, այնուամենայնիվ քրիստոնեական «պատմության փիլիսոփայություն» չկա որպես այդպիսին: Առավել ճշգրիտ կլինի ասել, որ կան քրիստոնեական սկզբունքներ, որոնց դիրքերից շարադրվում է պատմությունը, և դա տարածվում է ոչ միայն միջնադարի վրա, այլև ընդհուպ մինչև մեր օրեր: Ուստի ոչ թե քրիստոնեությունը առաջադրում է որոշակի պատմության փիլիսոփայություն, այլ ինքը պատմական է և իրենով ներկայացնում է պատմություն, որի նկատմամբ փիլիսոփայական անդրադարձերով ի հայտ են գալիս տարբեր պատմափիլիսոփայական հայեցակարգեր: Եվ կարևորագույն խնդիրն այստեղ այն է, թե կարող է արդյոք այլ պատմություն լինել քրիստոնեությունից հետո:

Լուսավորականությունը և պատմապաշտության ծագումը ենթագլուխը քրիստոնեության ստեղծած պատմական աշխարհից դուրս գալու և պատմությունը գիտակարգի վերածելու զուգահեռ միտումների մասին է, որ ձևավորվել են «Լուսավորականություն» կոչվող ժամանակաշրջանում: Լուսավորականության կողմնակիցները, էապես կարևորելով կրթության և գիտության տարածման հրամայականը, փաստարկում էին, որ առաքինությունների ու բարոյականության կատարելագործման հիմքում գիտելիքն է, որն իր ռացիոնալ դրսևորմամբ կենսաբարելավող ուժ ունի: Բարենպաստ միջավայրի խոչընդոտները հիմնականում երեքն են՝ տգիտությունն ու սնահավատությունները, միապետական կարգերը և կղերականությունը: Քանի որ առաջինն է մյուս երկուսի պատճառը, ուստի հակամիապետականություն ու հակակղերականություն սերմանողը պիտի գիտելիքի մասսայականացումը լինի: Եթե միապետականությունը փոխարինվեր օրենքներով, իսկ մարդիկ ազատվեին եկեղեցապետությունից, բոլոր հիմքերը կլինեին իրավական սկզբունքներով ղեկավարվող հանրույթներ ձևավորելու համար, այլ կերպ՝ ժողովուրդները, որոնց հարաբերությունները կարգավորվում էին ավանդույթի ուժով, կվերածվեին բացառապես օրենքներով կարգավորվող քաղաքացիական հասարակությունների: Ուրեմն լուսավորականությունը հնարավորություն է տալու ձերբազատվել միապե-

տի և բնության միակողմանի ազդեցությունից, վերջինս ենթարկել մարդու կամքին ու մտքին՝ գրանցելով ուղիղ առաջընթաց: Լուսավորականության հիմնական արժանիքը հարատև քննադատական կեցվածքի մշակման միջոցով արդիականության չափման հնարավորությունն է, քանի որ ժամանակակից լինելն այդուհետ նշանակում է որոշակի վերաբերմունք ունենալ արդիականության հոսքի նկատմամբ, այլ ոչ թե պարզապես ընդունել դա: Լուսավորականությունն ըստ էության արդիականության նախահիմքն է՝ ժամանակաշրջանի, որն անընդհատ ինքն իրեն թեմա է դարձնում՝ չենթարկվելով ժամանակի հոսքին, քանզի ժամանակակիցը նա չէ, ով համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի չափանիշներին ու նորմերին, այլ նա, ով մշտապես վեր է կանգնում ժամանակային անցուդարձերից և շոշափում է իր գոյության սահմանները: Իսկ ժամանակակից մարդու համար պատմությունն այլևս չի ըմբռնվում իբրև աստվածային սկզբից ածանցյալ ընթացք դեպի վերերկրային նպատակ, որովհետև նա արդեն ածանցյալ հպատակ չէ, այլ հավակնում է ինքնուրույն բացահայտել պատմական օրինաչափությունները՝ իր բնությանը համապատասխանեցնելով ամենայն հնարավոր նպատակ: Թերևս գերագնահատում չի լինի պնդումը, որ լուսավորականության գաղափարը նախևառաջ հղացվել ու մտածվել է որպես պատմության փիլիսոփայության գաղափար, քանի որ դրա շրջանակներում է, որ մարդկային հանրությունն ուղղակիորեն խնդիր է դրել դառնալ իր պատմության ենթական: Կարելի է ասել՝ քաղաքացիանհատը նվաճում է պատմական տարածքը և այն տեղավորում բնության ներունակ սահմաններում՝ համարելով, որ պատմությունը բնական իրողություն է, ոչ թե վերբնական, որ բնական օրինաչափություններն են պարտադրում պատմական հոլովույթի տրամաբանությունը: Քաղաքացու կայացման իրողությունը, որը նշանավորում է նաև հոգևորի նկատմամբ քաղաքականի իշխանությունը, հավակնում է զրոյական կետից սկսել պատմությունը, ներկայացնել պատմության երկրային իմաստը: Առաջընթացի գաղափարը և պատմականության սկզբունք էլ տրամաբանորեն վերաճում են պատմապաշտության գաղափարի, որի հիմնական նպատակը կյանքի համապարպափ պատմականացումն էր: Լուսավորականության և պատմապաշտության նախնական ու գլխավոր նպատակն այդպես էլ վերջնականորեն կյանքի չկոչվեց, բայց դրանք խիստ կարևոր են պատմության տրամաբանական հայեցակերպն ամբողջացնելու, այսինքն՝ արդիությունը հասկանալու և իմաստավորելու համար:

Կամք առ կյանք և պատմության իմաստ ենթագլուխը նվիրված է կյանքի փիլիսոփայության և էկզիստենցիալիզմի շրջանակներում ձևավորված պատմության

ըմբռնմանը, ըստ որի՝ պատմագիտության ձևավորումից հետո կրթական ողջ համակարգը ձեռք է բերել պատմական ուղղվածություն՝ ստվերելով կյանքի ստեղծագործ մասնակցությունը: Պատմությամբ թելադրված կյանքն այլևս չունի նախկին թարմությունն ու ինքնաբուխությունը, իսկ կյանքից չսերած պատմությունը կույր հայեցողություն է, որ գերազանցապես զբաղված է մեռած ժամանակաշրջաններ ներկայացնելով: Անհատը, փորձընկալելով պատմությունը, պատմության դիտանկյունից մտածելով իրականությունն ու ինքն իրեն, էապես վտանգում է իր ինքնուրույնությունը, քանի որ ինքնազգացողությանն ու ինքնածավալմանը փոխարինելու է գալիս վերացական ու ընդհանուր հասկացություններով կառուցարկումը: Պատմությունը «չի նկատում» կյանքի եզակիությունը, պարտադրաբար այն մտցնում է համընդհանուր կաղապարի մեջ, ուստի հարկավոր է սրբագրել այդ վիճակը: Պատմականի էության ըմբռնման ճանապարհը կյանքի առարկայացման միջով է անցնում, մասնավորապես՝ երբ անհատը փորձում է ընդհանրական մակարդակի բարձրացնել իր եզակի ապրումը: Այդօրինակ գործունեությունը նախևառաջ իմաստաստեղծման արարք է. *իմաստն* է, որ, ի մի բերելով բազմաթիվ արժեքային հայեցակետեր, ներկայացնում է պատմության տարածաժամանակային ամբողջական պատկերը: Կյանքի այդ տարբեր իմաստները, լիցքավորված կամքով առ զորություն, հակամարտում են իրար դեմ և ներքուստ հավակնում համընդհանրության: Ստացվում է, որ ամեն իրավիճակում կյանքի ու պատմության իմաստի հարցը այս կամ այն կերպ լուծվում է, բայց ընդհանրապես պատմական երևույթների նպատակի խնդիրը մնում է անավարտ: Պատմությունը և դրա իմաստը կան միայն մարդու գիտակցության առանցքային ու հիմնարար հատկություններից մեկի՝ *հասկացման* շնորհիվ: Պատմության կամ պատմականության հասկացումը ենթադրում է պատմության իմաստի ընկալում, քանի որ վերջինս է պատմության բուն բովանդակությունը. անցյալի եղելությունները գոյություն չունեն որպես այդպիսին, բայց կան իբրև իմաստ: Դեպքերը մտածվում են պատմականորեն, եթե տեղայնացվում են իմաստի շրջանակներում: Ուրեմն պատմությունն իմաստ ունի ըստ սահմանման, որովհետև պատմության լինելությունը կամ պատմության հասկացումը նշանակում է իմաստի կայացում: Պատմության իմաստի խնդիրը չի պատկանում միայն անցյալին, այլ նույնիսկ հակառակը՝ անցյալը հասանելի է դառնում լոկ պատմության իմաստի ըմբռնման այս կամ այն դիրքից: Իմաստը պատմությունը տրամաբանորեն հայելու առանցքային սկզբունքն է, որի դիտանկյունից ի մի են գալիս պատմության տարբեր հատույթները, և հասկանալի են դառնում տվյալ ժամանակաշրջանում մարդկային վարքի առանձնահատկությունները:

Չորրորդ գլուխը խորագրված է *Պատմության քաղաքագիտական կամ սոցիալ-փիլիսոփայական հայեցակերպը. ո՞ւմ համար գոյություն ունի պատմությունը*: Պատմության հիմքի, ճանաչողության և իմաստի խնդրակարգերի համապարփակ քննարկումը ենթադրում է ևս մեկ հայեցակերպ, որի դիրքերից գլխավոր հարցը կարելի է ձևակերպել այսպես. *ո՞ւմ համար իմաստ ունի* կամ *ո՞ւմ համար է հնարավոր պատմությունը*: Այս հարցադրումն այստեղ խորագրված է որպես *պատմության քաղաքագիտական* կամ *սոցիալ-փիլիսոփայական* հարց, որովհետև այն վերաբերում է պատմության այս կամ այն դիտանկյունից ներկայացմանն ու պարտադրմանը կամ, ավելի ճշգրիտ, պատմական տարածքը նվաճելուն և «նվաճվածների» հետ համակեցութային ընդհանուր միջավայր ստեղծելուն:

Չորրորդ գլխի առաջին ենթագլուխը վերնագրված է *Համաշխարհային պատմության հնարավորության հարցը*: Պատմության քաղաքագիտական հայեցակերպում համաշխարհային պատմությունը կենտրոնական թեմա է, քանի որ դրա հեղինակումից են սկիզբ առնում պատմության քաղաքականացմանն առնչվող մյուս բոլոր խնդիրները: Մեկնարկելով իմացաբանության մեջ արդեն վաղուց չվիճարկվող դրույթից, որ օբյեկտը (առարկան) հնարավոր չէ առանց սուբյեկտի (ենթակայի), որ առարկան մտածելի է միայն որոշակի գիտակցության դիրքերից, հարցը կհնչի այսպես. ո՞րն է կամ ո՞վ է սուբյեկտը, որ հայում է համաշխարհային պատմությունը՝ իբրև օբյեկտ: Համաշխարհային պատմության կանխադրումը ենթադրում է որոշակի «մենք»-ի գոյություն, որը պիտի ունակ լինի դիմագրավելու պատմական մարտահրավերները, բայց առնվազն վիճարկելի են դրա լինելության հիմքերը. կա՞ նույն հայացքներն ու նպատակներն ունեցող *մենք*, թե՞ դա ևս վերաբերելի չէ առարկայական իրողություններին: Մյուս կողմից՝ համաշխարհայնացմանը զուգընթաց տեղային պատմությունները դադարում են հասկանալի լինել իրենց մեկուսացվածությամբ: Պատմագրությունը շարունակաբար աշխարհակարգի վերափոխումներից բխող նոր մոտեցումներ ու մեթոդներ է պահանջում: Եվ անհիմն չի լինի պնդելը, որ ժամանակակից պատմաբանը կամա թե ակամա գործ ունի համաշխարհային պատմության հետ, քանի որ ազգային դիրքերից գրված տեքստերը այսպես կամ այնպես առնչվում են համաշխարհային գործընթացներին: Այսինքն՝ «համաշխարհային պատմություն» ասվածը ոչ միայն հետազոտության առարկա է, այլև պատմության հայեցակերպ, պատմությունը հայելու դիտանկյուն, որ իր հետ բերում է մի ամբողջ մեթոդաբանական զինանոց: Օբյեկտիվիստական պատմագրության հավակնությունները հօդս են ցնդում պատմության քաղաքագիտական կամ սոցիալ-փիլիսոփայական հայեցակերպի դիտանկյունից, քանի որ

այդ պարագայում հստակ տեսանելի է դառնում պատմականացման աղբյուրը և, հետևաբար, հնարավոր հեռանկարները: Համաշխարհային պատմության խնդրի պարբերական ձևակերպումն արդեն իսկ կարևոր է ոչ միայն ամենայն տեղային պատմություն հասկանալու, այլև պատմության գաղութարար բեռից ձերբազատվելու համար:

Արևմուտքը Արևելքին դեմհանդիման ենթագլխում համաշխարհային պատմության հնարավորության հարցը մասնավորեցվում ու տեղափոխվում է Արևմուտքի և Արևելքի փոխհարաբերության համատեքստ: Այս պարագայում խոսքը ոչ միայն դրանցում պատմականացման տարբեր մեկնաբանությունների, պատմության՝ տարբեր գոյաբանական կարգավիճակների մասին է, այլև դրանց, ավելի ճիշտ՝ Արևելքի՝ ինքն իր անունից իրեն ներկայացնելու ունակության և հնարավորության հարցի մասին: Այլ կերպ՝ արդյոք շարադրված համաշխարհային պատմությունը սոսկ Արևմուտքի դիրքերից պատկերված, Արևմուտքին հարմարեցված և, հետևաբար, ինչ-որ առումով աղավաղված պատմություն չէ՞: Թեև Արևմուտքի և Արևելքի հարաբերությունները սկսվել են դեռևս Հերոդոտոսի ժամանակներից, բայց այն խնդրո առարկա է դաձել հատկապես անցյալ դարի 80-ական թթ. հետզհետե տարածում գտած հետգաղութատիրական դիսկուրսի (post-colonialism) շրջանակներում, որը, ըստ էության, սկիզբ է առել Էդվարդ Սայիդի *Օրիենտալիզմ* աշխատությունից: Այստեղ հիմնական խնդիրն այն է, որ արդիականացված արևելյան երկրները, որոնք հիմնականում այդպես են կոչվում իրենց ավանդույթներից հեռացած լինելու և բարձր տեխնոլոգիաների չափազանց լայն կիրառության առումով, արևմտյան ազդեցության արդյունք են: Մյուս կողմից՝ Արևելքը, չնայած հետզհետե աճող տնտեսական բարձր ցուցանիշներին, կրթական առումով դեռևս կախված է Արևմուտքից, բացի այդ արևելյան ավանդական կրթությունն ու ընդհանրապես մշակույթը (թեկուզ արդիականացած) ավելի շատ աչքի են ընկնում ներհայեցողությամբ ու ինքնամեկուսացմամբ, ինչը հնարավորություն չի տալիս դիսկուրսիվ ձևով ներկայացնելու ինքն իրեն, առավել ևս՝ ուրիշներին: Ուստի համաշխարհային պատմության հնարավորությունը ենթադրում է ոչ միայն արևմտյան մոտեցման քննադատություն, այլև, որն անհամեմատ շատ ավելի բարդ է, այլընտրանքի ստեղծանում: Սակայն հարկ է հավելել, որ պատմության քաղաքագիտական հայեցակերպից բխած այս խնդիրը չի վերաբերում բացառապես Արևմուտք-Արևելք հակամարտությանը, այն ունի նաև մասնավոր դրսևորումներ: Հայոց պատմության պարագայում դա մի կողմից՝ Սովետական Միության հետ

հարաբերության խնդիրն է, մյուս կողմից՝ Թուրքիայի, իսկ այդ խնդիրները դեռ լուծման ճանապարհին են:

Պատմություն և հիշողություն ենթագլուխը վերաբերում է հիշողության՝ իբրև ինքնության բաղկացուցչի պատմականացման խնդրակարգին, որի առանցքը ենթակայական հիշողությունը ուրիշին իբրև պատմություն պարտադրելու հնարավորության ու հիմնավորվածության հարցն է՝ կենտրոնացած *հավաքական հիշողություն* հասկացության վրա: Ենթագլխում քննարկվում են Մորիս Ալբվակսի, Պիեռ Նոռայի, Յան և Ալայդա Ասմանների հիշողության մասին ուսմունքները, և պատմության ու հիշողության փոխհարաբերությունները ներկայացվում է երեք փուլով՝ պատմության և հիշողության նույնություն, պատմության և հիշողության բևեռացում, պատմության և հիշողության փոխներգործություն: Հին Հունաստանից սկսած, մի տևական շրջան, պատմագրել՝ նշանակում էր հիշողություն ամրագրել: Պատմության և հիշողության բևեռացումը սկսվում է պատմականության սկզբունքի (historism) ձևավորումից, երբ Եվրոպայում պատմական գիտակցությունն առարկայական է դառնում ֆակուլտետների, ամբիոնների և գիտակարգերի տեսքով: Պատմության և հիշողության մերձեցման կարևորությունը գիտակցվում է տրավմայի մտածման պարագայում, քանի որ այն ավելի մեծ ներունակություն ունի հավաքականություն ապահովելու, ուստի, ազգային հիշողության թեման ակտուալ է դառնում հենց դրա շուրջ: Տրավմաներին նվիրված մասնագիտական գրականության մեջ ամենաշատը քննարկման նյութ է դարձել ցեղասպանությունը, մասնավորապես՝ Հոլոքոստի տեսքով: Հայկական միջավայրում այս թեման հրատապության գագաթնակետին է հասնում Եռեղնի համատեքստում, քանի որ այդտեղ առավելապես ակնհայտ է դառնում, որ պատմությունը զուտ վկայություններից կամ մերկապարանոց ժամանակագրությունից վերածվում է ոգեկան իրականության, երբ ապահովում է որոշակի խմբի կամ հավաքականության շարունակականությունը: Պատմության քաղաքագիտական հայեցակերպն է բացահայտում և որոշարկում պատմության և հիշողության փոխահարաբերության բարդ խնդիրը: Դժվար է պատկերացնել այս խնդրի հանգուցալուծումը, քանի որ հիշողությունը ակտուալ է սերնդեսերունդ, սակայն դրա քննարկումն իսկ վերահսկիչ գործառույթ է իրականացնում պատմության ոլորտում: Հիշողությունը գոյաբանական, իմացաբանական, բարոյագիտական նյութ է պատմության համար, հետևաբար՝ պատմության փիլիսոփայության մեջ դրան հղումները անխուսափելի են, ինչը նշանակում է, որ սոցիալ-փիլիսոփայական ծանրաբեռնվածություն ունեցող այս խնդիրը կարող է իր հետքը թողնել նաև մյուս հայեցակերպերի վրա:

Պատմության ավարտի հայեցակարգերը ենթագլխում քննարկվում է պատմության իմաստին ու տրամաբանությանն առնչվող մի հարց, որը հայտնի է «պատմության ավարտի խնդիր» անունով և որն առավել խիտ կերպով ներկայացված է Ֆրենսիս Ֆուկույամայի *Պատմության ավարտը և վերջին մարդը* աշխատության մեջ: Այդ գրքում հեղինակը, միջնորդավորվելով Հեգելի ու Մարքսի՝ պատմության ավարտը մտածող առաջադիմական ուսմունքներից, դրանք փոխադրում է ազատական ժողովրդավարության (լիբերալ դեմոկրատիայի) համատեքստ: Նա մեկնարկում է այն գաղափարից, որ սկզբունքորեն հնարավոր չէ գերազանցել ազատական ժողովրդավարության իդեալը, ինչի հիմնական ապացույցը Սառը պատերազմի ավարտով ԽՍՀՄ փլուզումն է: Ազատական ժողովրդավարության կենսունակ այլընտրանքների բացակայությունն ուղղակիորեն վկայում է պատմության ավարտը: Խոսքն այն մասին է, որ լավագույն հասարակարգը ազատական ժողովրդավարությունն է, և այս առումով *պատմության ավարտը* նշանակում է, որ ոչ թե մեծ իրադարձություններ չեն լինելու, այլ որ համընդհանուր Պատմությունը, սպառելով իր ներքին հնարավորությունները, հասել է իր գագաթնակետին: Ֆուկույաման, առանձնապես չներգրավվելով ազատականության և նորազատականություն բանավեճի մեջ, ինչպես նաև մանրամասն չներկայացնելով ժողովրդավարության գաղափարի պատմությունը և դրա արդյունքում ձևավորված կոնոտացիաները, փորձում է հիմնավորել, թե ինչպես է դրանք միավորող սկզբունքը՝ անձի ազատության և իրավունքների գաղափարը, առաջնային տեղ զբաղեցրել գաղափարախոսական պատերազմներում: Սակայն թե՛ գաղափարախոսական միակողմանիության, թե՛ փիլիսոփայական հիմնավորվածության թերացման պատճառով այդ ուսմունքն արժանացել է տարբեր քննադատությունների, որոնք կամ կատարելագործում են պատմության ավարտի հայեցակարգը, կամ էլ հիմնովին մերժում են այն: Պատմության ավարտի գաղափարը, որն այդքան հնչեղություն է ստացել արդի աշխարհում, Արևմուտքի դիրքերից պատմության նվաճման հերթական հնարն է, կամ տվյալ դեպքում առավել ճշգրիտ կլինի ասել՝ ԱՄՆ-ի լեգիտիմացման ու հեղինակության բարձրացմանն ուղղված մշակութային ծրագիր, քանզի ոչ միայն թերի է դրա փիլիսոփայական հիմնավորումը, այլև կասկածի տակ է այսպես կոչված երրորդ աշխարհի համար այդ գաղափարախոսության նպատակահարմարությունը: Պատմության ավարտի հայեցակարգը պատմափիլիսոփայության ոլորտի հերթական հղացումներից է, որի դիմագրավման ճանապարհը պատմության քաղաքագիտական հայեցակերպի համակողմանի վերհանումն է:

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքները, որոնցից առավել կարևոր են հետյալները.

- Պատմության փիլիսոփայության ոլորտում տարբեր հարացույցերի ի հայտ գալով ստեղծվել է անորոշություն՝ ընդհուպ մինչև ոլորտի առարկայի սահմանման հարցում, և պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծությունն ի զորու է ինչ-որ չափով որոշակիություն մտցնել ոլորտում:
- Պատմության փիլիսոփայության ոլորտում առաջացած գաղափարական խառնաշփոթը լուծելի է պատմության փիլիսոփայական հնարավոր հայեցակերպերի բացահայտմամբ և որոշարկմամբ: Այդ հայեցակերպերը նոր հորիզոններ են բացում պատմությունը մտածելի դարձնելու համար:
- Պատմությունը մտածելի է և դրսևորվում է գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և սոցիալ-փիլիսոփայական կամ քաղաքագիտական հայեցակերպերի տիրույթներում, որտեղ այն ձեռք է բերում որոշակի յուրահատկություն:
- Պատմության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական, քաղաքագիտական հայեցակերպերում կենտրոնականը համապատասխանաբար հետևյալ հարցերն են՝ ի՞նչ է պատմությունը, ինչպե՞ս է հնարավոր պատմությունը, իմաստ ունի՞ պատմությունը, և ո՞ւմ համար գոյություն ունի պատմությունը: Այս հարցադրումների նկատի առնումը նպաստում է թե՛ պատմության փիլիսոփայության, թե՛ պատմագրության ոլորտում մի շարք խնդիրների լուծմանը:
- Պատմականացման և պատմության պարբերացման տարբեր ըմբռնումների պատճառով պատմության փիլիսոփայության մեջ ձևավորվել են տարբեր, երբեմն նույնիսկ հակադիր հայեցակարգեր, որոնց հակընդդիմությունը խոչընդոտ է ինչպես պատմության, այնպես էլ պատմության փիլիսոփայության հասկացման ճանապարհին: Պատմության գոյաբանական հայեցակերպի համակարգային-մեթոդաբանական վերլուծությունն ընդլայնում է պատմական մտածողության համատեքստը՝ դաշտ ստեղծելով պատմափիլիսոփայական տարբեր ուսմունքների երկխոսության համար:
- Շարադրական և իրողութենական պատմությունների համապատասխանության հարցը մեթոդաբանական խնդիր է, որի լուծումից է բխում պատմափիլիսոփայական հարացույցի որակական որոշակիությունը: Կախված

նրանից՝ պատմագրությունը կառուցում, վերակառուցում, թե ապակառուցում է պատմական իրականությունը, գործ ենք ունենում պատմության փիլիսոփայության որոշակի համակարգի հետ: Այդ երեք հարացույցերի մեթոդաբանական փոխառնչությունները կարող են լայն հորիզոն բացել պատմափիլիսոփայական մտքի զարգացման համար:

- Պատմության տրամաբանական և բարոյագիտական հայեցակերպերն ըստ էության համընկնում են, քանի որ առաջինը վերաբերում է պատմական ընթացքի տրամաբանությանը, պատմության իմաստին, իսկ երկրորդը՝ այդ իմաստից բխող մարդկային արարքների բնույթին: Պատմության իմաստի կամ տրամաբանության հայեցակարգերը կարելի է բաժանել չորս տեսակի՝ առասպելական, քրիստոնեական, լուսավորական և էկզիստենցիալիստական: Առաջինը պատմությունը պատկերացնում է շրջանաձև, կրկնվող և առասպելականությունից ածանցված, երկրորդի համաձայն՝ պատմությունը վախճանաբանական ընթացք է դեպի աստվածայինը, երրորդի համար պատմությունն ուղղագիծ առաջընթաց է, իսկ չորրորդի պատկերմամբ՝ պատմությունն ածանցյալ է մարդու պատմական բնույթից:
- Պատմության սոցիալ-փիլիսոփայական կամ քաղաքագիտական հայեցակերպը բացահայորեն կամ ոչ բացահայտորեն վերաբերում է պատմական տարածքը նվաճելու նկրտումներին, ինչը մեկ այլ դիտանկյունից նմանվում է պատմության ենթակայի գոյաբանական խնդրին՝ մեկ անգամ ևս վկայելով պատմության փիլիսոփայական հայեցակերպերի միասնական դիտարկման անհրաժեշտության մասին:
- Պատմության քաղաքագիտական հայեցակերպի կենտրոնական գաղափարը համաշխարհային պատմության գաղափարն է, որն ինքնին պարադոքս է ներկայացնում, քանի որ մտածելի է լոկ ազգային դիտանկյունից: Այսինքն՝ համաշխարհային պատմությունը հնարավոր է որպես ազգային պատմությունների ամբողջություն, իսկ ազգային պատմությունն էլ կարող է կայանալ միայն համաշխարհային պատմության համատեքստում:
- Պատմության իմացաբանության մակարդակում առկա շարադրանքի և իրողության համապատասխանելիության խնդրին քաղաքագիտական հայեցակերպում համապատասխանում է պատմության և հիշողության փոխհարաբերության հարցը, որի առանցքային թեման հավաքական հիշողության և ցեղասպանության պատմականացման հնարավորությունն է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Հերմենևտիկայի տեղը իմացաբանության հիմնավորման ծրագրերի համատեքստում», *Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի 3: Գիտական աշխատություններ: Հասարակական գիտություններ*, Պրակ 8, Երևան, Լինգվա, 2010, էջ 148-158:
2. «Շարադրական պատմության հնարավորության հարցի շուրջ», *Իմաստություն*, 2014, 2 (3), էջ 161-167:
3. «Եղեռնի մտածման հեռանկարները. նախապատմությունից դեպի պատմություն», *ՎԷմ*, 2015, թիվ 2 (50), ապրիլ-հունիս, էջ 249-260:
4. «Ինքնության դիսկուրսի հեռանկարները (մեթոդաբանական դիտարկումներ)», *Իմաստություն*, 2015, 1 (4), էջ 45-50:
5. «Հայդեն Ուայթի մետապատմության գաղափարը լեզվաբանական շրջադարձի համատեքստում», *ՎԷմ*, 2016, թիվ 1 (53), հունվար-մարտ, էջ 11-18:
6. «Պատերազմի փիլիսոփայությունը. խորհրդածություններ «քառօրյա պատերազմի» շուրջ», *ՎԷմ*, 2016, թիվ 3 (55), հուլիս-սեպտեմբեր, էջ 180-189:
7. “Language and Experience in the Post-Genocide Society”, *Wisdom*, 1(8), 2017, pp. 60-63.
8. «Պատմություն, լեզու, փորձ», *ՎԷմ*, 2017, թիվ 2 (58), ապրիլ-հունիս, էջ 9-23:
9. «Պատմություն, ինքնություն, ազատություն», *Լեզու, խոսք, իրականություն. միջազգային գիտաժողով*, Երևան, 2017, էջ 112-124:
10. “Can There be a Credible Philosophy of History?”, *Wisdom*, 2 (9), 2017, pp. 43-47.
11. «Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցը», *ՎԷմ*, 2017, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 10-17:
12. “Is it Possible to Learn to be Human from History?”, *Cultural and Religious Studies*, Vol. 6, No 8, August 2018 (Serial Number 45), pp. 464-470.
13. “History and Memory”, *Wisdom*, 2 (11), 2018, pp. 66-70.
14. «Պատերազմի պատմականացման հեռանկարները և զոհի բարդույթի հաղթահարման ուղիները», *ՎԷմ*, 2021, թիվ 2 (74), ապրիլ-հունիս, էջ 8-23:
15. «Միջնադարը պատմութեան մէջ, պատմութիւնը միջնադարում», *Էջմիածին*, ՀԸ տարի (2021), համար Ժ, էջ 80-101:

16. “Critical Issues in Teaching World History”, *Communication & Cognition*, Vol. 54, No 3-4, 2021, pp. 143-154.
17. «Մեդիան և պատերազմի պատմագրման մարտահրավերները», *Մեդիան և տեղեկատվությունը XXI դարի պատերազմներում. գիտաժողովի նյութեր*, Եր., Ակտուալ արվեստ, Բանք, 2021, էջ 128-135:
18. «Վեպի ավարտը. կյանքի և պատումի սահմանին», *Կյանքը և վեպի ընդգրկումները. ազդեցություններ և զարգացման ուղենիշներ. միջազգային գիտաժողովի նյութեր*, Եր., ՎՄՎ-Պրինտ, 2022, էջ 182-191:
19. «Խաղաղությունը որպես պատում և իրողություն», *ՎԷմ*, 2022, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 6-23:
20. «Աննալների դպրոցի պատմագիտական հայեցակարգը», *ՎԷմ*, 2023, թիվ 1 (81), հունվար-մարտ, էջ 267-178:
21. «Սփյուռքի պատմականացման գիտակարգային ու գրական հնարավորությունների շուրջ», *Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի: Մանկավարժություն և հասարակական գիտություններ*, 2 (63), 2023, էջ 276-286:
22. “In Quest of Peace and its Subject”, *Conatus – Journal of Philosophy*, Vol. 8, no. 2, 2023, pp. 69-82.
23. *Նիկողոս Սարաֆեան. ի խույզ կորուսյալ միջավայրի*, Եր., Ակտուալ արվեստ, Բանք, 2023, 388 էջ:
24. “Reimaging Epistemology: A Historical Analysis of Shifting Paradigms”, *Multidisciplinary Reviews*, Vol. 7, Issue 5, 2024, pp. 1-7.
25. “On How there is Diasporic Identity”, *Balkan Journal of Philosophy*, Vol. 16, Issue 1, 2024, pp. 63-70.
26. “The Nature of Historical Research and Scientometric Methodology” (co-author – Ashot Gevorgyan), *Conatus – Journal of Philosophy*, Vol. 9, no. 1, 2024, pp. 33-43.

Мосинян Давид Ромикович

МЕТОДОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ФИЛОСОФСКИХ АСПЕКТОВ ИСТОРИИ

Диссертация на соискание ученой степени доктора философских наук по специальности 09.00.01 “Философия”.

Защита состоится 1-ого ноября 2024 года в 15:00, по адресу 0025, г. Ереван, ул. Абовяна 52а, на заседании Специализированного совета 013.

РЕЗЮМЕ

История, будучи непознаваемой посредством эмпирических методов, неизбежно требует рассмотрения философских аспектов. Вопросы, возникающие в процессе изучения истории, и возможные ответы на них способствуют не только глубокому пониманию самой истории, но и обоснованию достижений историографии. В результате стремления к последовательному завершению этих размышлений и их обоснованию возникает желание превратить теоретические наблюдения, связанные с историей, в дисциплину – философию истории, которая, кажется, должна не только определять сущность истории, но и направлять или контролировать развитие историографии. Иными словами, философия истории определяется как дисциплина, предметом которой является история как реальность и сфера её познания, над которой осуществляется философская рефлексия. В то же время философские вопросы, связанные с историей, предполагают существование истории, которая, однако, различается в представлениях различных историко-философских концепций. Существование истории в значительной мере зависит от определенного философского аспекта. Поэтому возникает необходимость обобщить и проанализировать все возможные философские аспекты истории, для того чтобы прояснить возможности философии истории как дисциплины в целом. Это также позволит внести методологическую определенность в позиции и аргументы, формирующиеся в ее рамках. Кстати, историография, не отвечающая на вызовы, вытекающие из философских аспектов, ограничивается лишь документированием случаев и событий. Это ведет к неизбежным кризисам: с одной стороны, тексты становятся повторяющимися, а с другой – исторический контекст остается

недостаточно освещенным, что приводит к разрыву между прошлым и настоящим. Преодоление кризисов, по своей сути, заключается в открытии и раскрытии новых горизонтов в области истории, которые не были представлены позитивистской историографией, ограничившейся лишь описанием событий. Идейные различия между различными философиями истории также являются мыслимы и дискуссионны, когда они сводятся к философским аспектам, то есть когда выдвигается методологический инструментарий, который позволяет рассматривать философские наблюдения, связанные с историей, в едином контексте. Поэтому очевидно, что методологический анализ философских аспектов истории является важным не только для развития армянской историографии и историко-философской мысли, но также для определения области философии и теории истории в целом. Сказанное вполне достаточно, чтобы утверждать, что существует необходимость систематизировать и проанализировать философские вопросы, возникающие по отношению к истории, а также разработать возможные ответы на них. Поэтому целью диссертации является придание определенности области философии истории путем выявления, выделения и описания возможных философских аспектов истории, а также подвержение их методологическому анализу. Для достижения этой цели необходимо использовать системный подход, который должен быть конкретизирован в приложениях системного метода. Систематический метод в данном контексте предполагает учет философских дисциплин и рассмотрение всех возможных философских аспектов истории с их точки зрения. Соответственно, можно выделить четыре основных аспекта: *онтологический*, центральной проблемой которого является вопрос “что такое история как таковая?”, *эпистемологический*, где ключевым является вопрос “как возможна история и историография?”, *логический* или *этический*, который призван ответить на вопросы “имеет ли история смысл и как она разворачивается, в чем ценность истории?”, и, наконец, *социально-философский* или *политологический* аспект, ядром которого является вопрос “для кого существует история?” или, в каком-то смысле, проблема взаимоотношений истории и власти. Вопросы, поднятые в диссертации, и их анализ, а также результаты исследования, будут способствовать координации и улучшению области философии истории, а также уточнению методологии для решения возникающих неопределенностей в этой области.

Davit Mosinyan

METHODOLOGICAL ANALYSIS OF PHILOSOPHICAL ASPECTS OF HISTORY

Thesis for the degree of Doctor in philosophical sciences, under the specialty 09.00.01 “Philosophy”.

The defense will take place on 1st of November 2024 at 15:00 at the meeting of the Special Board No 13, acting at Yerevan State University.

Abstract

The study of history, given its inherent limitations in empirical verification, necessitates a profound engagement with its philosophical aspects. The questions that arise throughout the examination of historical events and their potential answers not only deepen our comprehension of history but also substantiate the achievements and methodological advancements in the field of historiography. As a result of the desire for a consistent completion and justification of these reflections, there emerges a drive to transform theoretical observations related to history into a distinct discipline: the philosophy of history. It seems that this discipline seeks not only to ascertain the essence of history but also to guide and regulate the development of historiography. In other words, the philosophy of history is defined as a discipline that examines history both as a reality and as a domain of knowledge, upon which philosophical reflection is conducted. On the other hand, philosophical inquiries related to history presuppose the existence of history, though this existence is interpreted differently across various philosophical conceptions. The existence of history hinges largely on particular philosophical aspects. Hence, there exists a compelling imperative to comprehensively generalize and analyze all conceivable philosophical aspects of history. This undertaking not only clarifies the potential scope of the philosophy of history as a discipline but also fosters methodological precision in shaping its positions and arguments. By neglecting the challenges posed by philosophical aspects, historiography confines itself to mere documentation of cases and events. Consequently, it faces inevitable crises: the texts become repetitive, while the historical context remains inadequately illuminated. This results in a palpable gap between the past and the

present. At its core, overcoming these crises entails the exploration and revelation of new horizons within the field of history. These horizons were not previously represented by positivist historiography, which was constrained to mere event description. Divergences between various philosophies of history are also conceivable and subject to debate when they are distilled into philosophical aspects. This occurs when a methodological toolkit is introduced, enabling the examination of philosophical observations concerning history within a unified framework. Hence, it is evident that the methodological analysis of the philosophical aspects of history holds significance not only for the advancement of Armenian historiography and historical-philosophical thought but also for defining the realm of philosophy and the theory of history at large. The discourse thus far underscores the imperative to systematize and analyze the philosophical inquiries emerging in connection with history, while also endeavoring to formulate plausible responses to these inquiries. Therefore, the aim of the dissertation is to establish clarity within the domain of the philosophy of history by identifying, elucidating, and describing potential philosophical aspects of history, subsequently subjecting them to rigorous methodological analysis. To achieve this aim, it is necessary to employ a systems approach, which must be specified in applications of the systems method. The systematic method in this context involves taking into account philosophical disciplines and considering all possible philosophical aspects of history from their point of view. Accordingly, four main aspects can be distinguished: *ontological*, which addresses the fundamental question "what is history in itself?"; *epistemological*, focused on understanding "how is history and historiography possible?"; *logical* or *ethical*, aimed at exploring "does history have meaning and how does it unfold, what is the value of history?"; and finally, the *socio-philosophical* or *political* aspect, centered around the inquiry "for whom does history exist?" or, in a broader sense, the examination of the relationship between history and power. The questions posed in the dissertation and their subsequent analysis, along with the findings of the study, will significantly contribute to the harmonization and advancement of the philosophy of history. Furthermore, they will aid in refining methodological approaches to address emerging uncertainties within the discipline.